Ltn
928

1999

ՀԱՅՈՑ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ

ԳՐԵՑ Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

«Ողջոյն հասեալ եւ շինութիւն դիցն օղնականութեամբ. շինութիւն, պարարտութիւն յարեւոյն Արամազդայ. խնամակալութիւն յանահիտ տիկնոջէ. եւ բաջութիւն հասցէ մեզ ի բաջն Վահագնէ, ամենայն Հայոց աշխարհիս»: Ագաթ:

Լեռ
928

Ի ՎԵՂԻՐԶԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1879 — ՌՃՀԹ

ՀԱՅՈՑ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ

ԳՐԵՑ Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

«Ողջոյն հասեալ եւ շինութիւն ղիցն օրնականութեամբ. շինութիւն, պարարտութիւն յաբուոյն Արամազդայ. խնամպկալութիւն յԱնահիտ տիկնոջէ. եւ քաջութիւն հասցէ ձեզ ի բաջն Վահագնէ, ամենայն Հայոց աշխարհիս»: Ագաթ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-ի ԳՄ. ՍՍՌ
Ա ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ
/ 34

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ
1879 — ՌՃԻԹ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ.

2ф 929 4928-40

ՀԱՑՈՑ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ.

«Ինձ ասա բարեկամդ ով է, որ ես ասեմ քէ դու ինչ մարդ ես:» Առած:

Ոչ մի ազգ որ կրօն չունենայ. ոչ թէ քաղաքակիրթ ազգերը, վայրենի ազգերն անգամ կրօն ունին. թէպէտ ամենայն տեղ մի առանձին գաղափար է եղած գերագոյն էակի վերայ, բայց ոչ մի տեղ, ոչ մի ազգ, եւ ժողովուրդ մինչեւ ցայսօր չէ ժխտած այդ էակի գոյութիւնը. չէ եղել ոչ մի շրջան ընդհանուր պատմութեան մէջ, ոչ մի դար անգամ, երբ կրօնը դադարած լինէր, երբ ազգերն ու ժողովուրդները գերագոյն էակի գաղափարը մերժած լինէին մի որեւիցէ կերպով:

Սակայն հետաքրքիրն այն է, թէ ինչպէս է ստեղծուում մի ազգ իւր կրօնը, ինչով է հաստատուում մի ազգի մէջ այս կամ այն գաղափարը գերագոյն էակի վերայ: Այս կէտը հետաքրքիր է այն պատճառով, որ մենք այդպիսով կարող ենք կշռել մի ազգի մտաւոր եւ բարոյական զարգացման չափը եւ, որ աւելի նշանաւորն է, նորա պատմական յառաջադիմութիւնը: Մեր նպատակը չէ այդ կէտը պարզելու առաջիկայ նկարագրութեան մէջ, որովհետեւ այդ մեր կարողութիւնից վեր է, մենք մտադիր ենք միայն մի համառօտ պատմական տեսութիւն առաջարկելու, թէ որոնք էին հեթանոս Հայերի աստուածութիւնները եւ Հայի բնաւորութեան ո՞ր կողմերն էին պատկերացնում նոքա:

Հայ ազգը, որ ըստ աւանդութեան Հայկի շառաւիղներից է սերած, իւր քաղաքակրթութեամբ մեր կարծածէն եւս աւելի հին է. այս երեւում է նորա լեզուից, որ բովանդակում է իւր մէջ շատ այնպիսի բառեր, որոնք հին քաղաքակրթութեան մնքեր են յայտնում. բառեր, որոնք այսօր մեր աչքին շատ հասարակ են երեւում, թէեւ հին ժամանակներն ունեցել են

մի վսեմութիւն. բառեր, որոնք իրենց բուն նշանակութիւնը գրեթէ լիովին կորուցել են, սակայն իրենց հետքերը թողած են հնագոյն քաղաքակրթեալ ազգերի լեզուների մէջ, ինչպէս օրինակ սանսկրիտերէնի, զենդերէնի եւ յունարէնի, որով եւ ցոյց են տալիս Հայի ցեղակցութիւնն այն ազգերի հետ*)։

(*) Եթէ այդպիսի բառերն ընդհանրապէս թուելու լինէինք, շատ կրնեւանայինք մեր նպատակից. ուստի աւելորդ չենք համարում միայն մի քանիսն յիշել այստեղ իբրեւ օրինակ։ Թուական անուններն առաջին նշանն են ազգերի համացեղութեան եւ նոցա բաղաքակրթութեան. այդ կողմից Հայոց թուականների մէջ երեւում է շատ մեծ նմանութիւն սանսկրիտ եւ զենդիկ թուականներին, որոնց միջնորդութեամբ եւ յոյն ու լատին լեզուների թուականներին. այսպէս. զորօրինակ չորս կամ բառ, սնկ. չատուր. զնդ. չաթուարէ, լտ. quatuor, պրսկ. չահար, ռս. четыре. հինգ, սնկ. զնդ. պանչան, պրսկ. փէնջ, յնր. պէնտա, լտ. quinque, ռուս. пять, գերմ. fuenf (ֆիւնֆ) տասն, սն. դասան. զնդ. դասա. յնր. դէկա, լտ. decem, պրսկ. դահ, ռուս. десять. հազար, սնկ սահասրա, զնդ, հազանրա, պրսկ. հազար եւն։ Թուականների նման են եւ էական դերանունները, օր. ես, սնսկր. ահամ, զնդ. ազէմ, դու, սնկ. տվամ, զնդ. տում, լտ. tu, պրսկ. տու, գերմ. դու, ռուս. ты. ֆրս. tu եւն։ Իսկ եթէ այս խօսքերից զատ նայելու լինինք հասարակ անունների վերայ, կըտեսնինք, որ ազգականութեան անունները մեծ մասամբ նոյնն են բոլոր յիշեալ ազգերի մէջ. զօր. հայր, սնկ. պիտար (արմ. պա = սնուցանել, ուրեմն պիտար = սնուցիչ), զնդ. պատար յնր. պատեր լտ. pater, պրսկ. փադար, գերմ. fater. մայր, սնկ. մատար (արմ. մա = ըստեղծել, առնել, ուրեմն մատար = արարիչ). զնդ. մատար, յնր. մատէր, լտ. մատէր, պրսկ. մադար, գերմ. mutter, ռուս. սեռ. матери. դուստր, սնկ. դուհիտա՛ր (արմ. դուհ = կթել, ուրեմն դուհիտա՛ր = կթող), զնդ. դուխդհար, պրսկ. դուխտար, յնր. դուդա՛տէր գերմ. tochter, ռուս. սեռ. հլ. дочери, եւն. այսպիսի խօսքերից է հարազաս բառը, որ սնկ. պրաջա զնդ. ֆրազայնտի, պրսկ. ֆարզանդ խօսքերին է ցեղակից եւ նշանակում է առ ծնեալ, որդի, ժառանգ, (արմ. ջան = զան = ծն ծնանիլ. այս արմատից է եւ պայազաս խօսքը, որ նշանակում է տիրածին = իշխանորդի)։ Ազգականութեան անուններից զատ կան եւ ուրիշ հասարակ անուններ մարդուս մարմնու անդամները նշանակող. որ նմանապէս յիշեալ լեզուներին ցեղակից են. զնդ. աչ, սնկ. արշա. լտ. oculus, ռս. око, очи, ունկն, յնր. ուս (ունս), ռս. ухо. գէս, սնկ. կէսա, ատամն, սնկ. դանտա, յնր. օդոուս լտ. dens, dentis եւն։ Կան նաեւ շատ հասարակ անուններ, որոնք նմանապէս նոյն ցեղակցութիւնն են ցոյց տալիս. զօր. տուն, սնկ. դհաման, լտ. domus ռս. домъ, խշտի, սնկ. քշիտի, զնդ. շիտի, նաւ, սնկ. նաու, յնր. նաուս, լտ. navis, բժիշկ, սնկ. բհիշաջ, զնդ. բաէշազաս. պրսկ. բիզիշակ. կով, սնկ. գօ, զնդ. գօ, գերմ, kuh. ասինք, սնկ. ստանաֆարբի, սնկ. սարպա, լտ. serpens, շուն, սնկ. սվան, զնդ. սպա, լտ. canis, լէտ, շուն

Հայոց լեզուի այս նշանաւոր հնութիւնն եւ ցեղակցութիւնն ուրիշ նշանաւոր լեզուների հետ տեղիք է տալիս մեզ կարծելու, որ Հայոց հեթանոսական կրօնն եւս մասամբ շատ մօտ է եղել այն ազգերի, եւ մանաւանդ հին Պարսից կրօնին. արդի մի քանի ժողովրդական նախապաշարմունքները կարող են առաւել ապացոյց լինել մեր ասածին. զորօրինակ այժմու սնոտիապաշտութիւնների մէջ յիշուում է թէ կտրած եղունգը գետին ձգելը մեղք է, խուզած մազը դուրս թափելը մեղք է, ընկած ատամը պէտք է անպատճառ եկեղեցու կամ մի այլ նուիրական պատի կամ սիւնի խորշերը կոխել, ճանապարհի վերայ մնացելը նոյնպէս մի տեսակ սրբապղծութիւն է համարուած, յօրանջելիս անպատճառ պէտք է տեառնագրել բերանը. բացի այս կան եւ շատ տեսակ սնոտիապաշտութիւններ երազ մեկնելու, վախ չափելու, աղօթելու, չար աչքի դէմ հնարներ գտնելու, յաջողութեան եւ ձախորդութեան պատճառները գուշակելու եւայլն եւայլն. նմանապէս մենք գիտենք, որ մատաղ մորթելու համար նախապէս պէտք է նուիրել զոհը (յաղել)։ մենք գիտենք, որ ամենայն Հայ մարդու համոզմունքն է թէ իւր հետ մի պահապան հրեշտակ կայ բարի կամ չար. մենք գիտենք, որ վիճակ բանալու սովորութիւն կայ Հայոց մէջ, ուր ջրերի եւ տնկերի գործակցութիւնը մեծ շնորհ կըհամարուի եւն։ Այս ամենը սակաւ տարբերութեամբ հին Պարսից հեթանոսութեան մէջ եւս եղած է, որն երեւում է Զրադաշտի պատուէրներից եւ նոցա մեկնիչների խօսքերից. ուրեմն հնութեան փոշին, որ թափ տալու լինինք, պիտի տեսնինք, որ այսօրուայ Հայի այդ եւ այդպիսի ուրիշ շատ ծէսերն եւ նախա-

---

յնր. կիւօն, տաշտ, զնդ. տաշտա, պրսկ. թէշտ ճախարսկ. սնկ. չակրա, զանդ, չաքրա, պրսկ. չարխ. կանդեղ, սնկ. չանդ = լուսաւորել. լատ. candelabrum. միս սնկ. մանսա, զնդ. մեազդա ռսր. мясо, հաւանք, զնդ. հաւանա, պրսկ. հաւան։ Նոցա նման են եւ վերացական խօսքերը. զօր. դաս, դատաստան. զնդ. դատա = օրէնք, հին պրսկ. դատա, ն. պրսկ. զադ. խրատ, զնդ. խրատու = բանականութիւն, խելք, պրսկ. խրադ եւն. անուն, սնկ. նաման, լտ. nomen, յնր. օնոմա, ռսր. имя, имени եւն. Բոլոր այս խօսքերը բաւական պիտի համարուին մեր վերեւն ասածը հաստատելու համար։

պաշարմունքներն եւս, որոնք մեզ թերեւս ծանօթ չեն, հաղարաւոր տարիներ Հայի հետ միասին ապրած են եղել անբաժան կերպով. եւ քրիստոնէութեան բոլոր բարոյական միջոցները չեն կարողացել անհետացնել հեթանոսութեան այդ դարաւոր հետքերը։ Բայց այս ապացուցանում է միայն, որ մի ժամանակ Հայոց կրօնական հայեացքները շատ մեծ նմանութիւն են ունեցել հին Պարսից կրօնական հայեացքներին. իսկ թէ որպիսի գաղափար են ունեցել հեթանոս Հայերը գերագոյն էակի վերայ, այդ եւս կարելի է մօտաւորապէս որոշել աչքի առաջ ունենալով նոյն իսկ հին Պարսից եւ նոցա ցեղակից հարեւանների հայեացքները։ Աշխարհիս արարչագործութեան նախապատճառն է ժամանակը, յաւիտենականութիւնը. հին Պարսիկների կրօնական համոզմունքներով՝ այդ անվախճան ժամանակում, ինչպէս որ աշխարհս երկու կերպ երեւոյթներ ունի բարի եւ չար, այնպէս եւս երկու գերագոյն էակ է եղել ՀԷՐ ԲԱՐԻ Լ ՀԷՐԸ ՉԱՐ։ Բարու արարիչն ու նախապատճառը Որմիզդն է, իսկ չարինը Արհմնը։ Մարդիկ պիտի ձգտին Որմզդին հաւատարիմ լինելու. որովհետեւ Որմիզդը լոյս է, կեանք է, փառք է, երջանկութիւն է, միով բանիւ այն ամենայն բանի տէրն է, ինչ որ չար չէ. իսկ ով որ Որմզդից հեռու է, նա խաբուած է Արհմնին, նորա վիճակն է խաւարը, մահը, անփառութիւնը, թշուառութիւնը, միով բանիւ այն ամենը, ինչ որ բարի չէ։ Ահա այս երկու գերագոյն էակների իշխանութեան ներքոյ էր համայն աշխարհը թէ տեսանելին եւ թէ անտեսանելին. այս երկուսի մէջ անդադար տեղի էր գտնում մի մրցումն, մի կռտաղի կռիւ. բայց հաւատացեալներն համոզուած էին, որ յաղթութիւնը Որմզդի կողմն է լինելու. եւ խորտակուած, խայտառակուած Արհմնը ի վերջոյ պիտի գնայ ստորերկրեայ թագաւորութիւնը եւ աշխարհս պիտի մնայ միայն լուսաւոր Որմզդի ձեռքը. ահա սորանից երեւում է ուրեմն, որ հին Պարսից համոզմունքով լոյսը միշտ յաղթելու է խաւարին եւ աշխարհս վերջ ի վերջոյ լոյսի թագաւորութեան մէջ պիտի մնայ։ Պարսից այս պարզ եւ ոգեւոր համոզմունքը նոյն եւ նոցա կրօնն էր. սակայն մենք գիտենք, որ այս պարզութիւնը չմնաց նոցա մէջ

միատեսակ ուղղութեամբ, այլ նոցա քաղաքական բաղդի հետ յեղյեղուաւ եւ նոցա կրօնի կերպարանքը։

Հայոց ազգը, որ թերեւս նոյն համոզմունքներն է ունեցած աշխարհիս ստեղծագործութեան վերայ, պիտի ունենար նաեւ մի եւ նոյն հայեացքը բարու եւ չարի, լոյսի եւ խաւարի վերայ։ Այս մենք տեսնում ենք նախ Հայոց հեթանոսական աստուածութիւնների որպիսութիւնից եւ երկրորդ Հայոց քրիստոնէութեան առաջին առաքեալների մականուններից կամ նոցա քարոզների ու երգերի մէջ հանդէս եկած դատողութիւններից ու բառերից։ Բացատրենք մեր խօսքը։

Բարին եւ չարը, լոյսն եւ խաւարն, ինչպէս մենք համոզուած ենք, հեթանոս Հայերի գաղափարի մէջ խիստ բաժանուած պէտք է լինէր. եւ նոցա աստուածութիւնների մէջ ջոկ ջոկ պիտի երեւար այդ երկու գաղափարի մարմնաւորութիւնը. միայն թէ նախապատուութիւնն առհասարակ բարու կողմն է եղած այլ ոչ չարի։ Ահաւասիկ սորա հաստատութիւնը. նախ որ Հայոց աստուածութիւնների մէջ չկայ ոչ մէկը, որ չարութեան, խաւարի, աւերանքի եւ մահու աստուած լինի, ինչպէս տեսնում ենք այդ ի թիւս այլոց, Հնդկաց եւ Յունաց աստուածների մէջ. երկրորդ որ Հայոց գաղափարով մահն եւ խաւարը չարերի վարձն է, չարութեան եւ ատելութեան հետեւանքն է. եւ երրորդ որ Հայոց դիւցազուններն եւս մաքառում են միայն չարութեան եւ խաւարի դէմ։ Այս ամենը կըզարդուի եթէ աչքի առնենք այն անունները, որոնցով պատուում էին հեթանոս Հայերն իրենց աստուածներին։ Առաջին պատուանունն է ՊԷԼ. այս բառը սանսկրիտական ՊԷԼ արմատից է, որ նշանակում է փայլել, շողալ. ՊԷ նշանակում է լոյս, պայծառութիւն, շողք.*) սորան արմատակից է եւ այն ժամանակի կոչումը, որ խաւար չէ, պայծառ է այսինքն ՊԷ-. այս խօսքը սանսկրիտեղծուով նշանակում է երկինք, «այսինքն պայծառ, լուսաւոր տեղ. մինչդեռ ՄՈ-ՂՆ բառը արմատակից է սանսկր. ՄՈ-= յաղ-

(*) Այս մտքով է գործ դրուած եւ ոյս բառը շատ տեղ մեր շարականների մէջ իբրեւ Աստուծոյ անուն օրինակ. «Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա» եւն։

թել, կապել խօսքին, որից ֆ-պ բառը նշանակում է յաղ-
թեալ, շղթայեալ. սորանից եւ երեւում է, որ խաւարը (մութը)
շղթայուում է լոյսից, այսինքն յաղթահարողը լոյսն է։ Նոյն
իսկ լոյս խօսքը եւ նորա պայծառ գոյները, որ Հայոց գաղափա-
ռով մի զուարթարար ու կենդանացուցիչ բան է, սանսկ. ջ-ղ=
փայլել, արմատից է յառաջացած եւ ամենայն մի ընտիր, սիրելի
առարկայի մակդիր է համարուում Հայ ժողովրդի բերանում.
ինչպէս օրինակ, մի ուրախութիւն շնորհաւորելիս «այ+ջ լոյս»
են ասում. յաջող գործ կատարողին պ-ջղ էջէ» կամ «պ+պակ
էջէ» են ասում. մատաղացու կենդանիների ճերմակն է նախագա-
սելի. արքայական կառքերի ձին կամ ջորին ճերմակ գոյնի է
յիշատակուում. ի վերջոյ քրիստոնէութեան ժամանակ ընդ-
հանրացած աղօթքն անունը, որ արեւելեան կողմն է, ուր են-
թադրում է ժողովուրդն իւր Արարչի աթոռը, աջ-լոյս բառի
հետ նոյնանշան է. այս ցոյց է տալիս, որ Հայ ժողովրդի գա-
ղափարով Աստուծոյ աթոռը միմիայն լոյսի մէջ կարող է գըտ-
նուիլ. միեւնոյն գաղափարի հնութեան հետքերն երեւում են
եւ մեռելների համար արած բարեմաղթութիւնների մէջ. զո-
բօրինակ՝ «Աստուած հոգին լ-ուս-որ է», լոյս գրէ» կամ նաեւ
լ-ուսահոգի ածականը. սորա հնութիւնը նորանից է երեւում,
որ նոյն տեսակ էին բարեմաղթում մեռեալների համար եւ հին
Պարսիկները*). մինչդեռ մենք գիտենք, որ այժմու քրիստո-
նեայ ազգերի մէջ այդ տեսակ բարեմաղթութիւններն այնքան
ժողովրդականութիւն չունին եւ տեղի են տուած այլ տեսակ
գարձուածների առաջ. լոյս բառի այս մեկնութեան հետ կապ
ունի եւ աչ (սնկ. ջ-ղ=արեւ) խօսքը, որ գործ է դրուում
կեանք խօսքի տեղ. յայտնի՞է, որ Եղիշէն մի տեղում ասում
է «զի պիտոյ է մեզ ընաւ կեանք անցաւոր աշխարհիս եւ
կամ ընդէր տեսանեմք պ-ջ-ղ յետ մերոց սիրելեաց» (եր. 80)։
Եթէ հինգերորդ դարում այս եւ այսպիսի գարձուածների

(*) Ֆիրդուսին իւր որդու մահը ողբալիս հետեւեալ խօսքերն է ասում. «Ամենակալը քոռ ճոգիդ Թող լոյս անէ, Թող պայծառ պահէ միշտ քու խաւար շուսինդ։» Շահնամ.

մէջ աչ-ղ խօսքը կեանք էր նշանակում, ուրեմն այսօրուայ մեր
ժողովրդի գործածած «աչ-ղ վկայ» «Աչ-ղ-ուած էղ աչ-ղ-պ-
ղ-ն պայ», «էրկէն աչ-ղ» եւ այն գարձուածները՝ մի անկշռելի հը-
նութիւն պիտի ունենան եւ անշուշտ հեթանոսական գաղա-
փարների հետքերն են միայն. իսկ մեզ համար նշանաւորն այս
չէ, այլ այն, որ հեթանոս Հայերի աչքին կեանքը, որ աշխար-
հիս ամենաբարձր բարիքն է, գարձեալ լոյս եւ պայծառու-
թիւն է նշանակում եւ համեմատուում է երկնքի ամենալու-
սաւոր մարմնի հետ կամ գէթ նոյնանշան գաղափար է։ Այս
ամենին հակառակ մենք տեսնում ենք, որ չարութեան գա-
ղափարները չար ոգիների մէջ է ամփոփել Հայ ժողովրդի ըս-
տեղծագործութիւնը. զորօրինակ խաբեբայութիւնն ու խար-
դախութիւնը դրել է դ-ւ բառի մէջ եւ բոլոր խաբեբաներին
դրել է դեւերի տեսչութեան ներքոյ. յայտնի է, որ դ-ւ բառը
ցեղակից է զանդիկ դ-էվ բառին եւ ծագում է դ-ա-արմատից,
որ նշանակում է խ-ռ-էլ, դ-ա-էլ. սորան արմատակից է եւ դ-
-ա-ծ-ան խօսքը, որ նշանակում է անհաւատարիմ, մատնիչ.
«դ-ա-ն» եւ «դ-ա-ա-ծ-ան» ցեղակցութիւնից մեզ հեշտ է ենթադրել,
որ հեթանոս Հայի գաղափարի մէջ խարդախ անձինք դեւի
հետեւողներն են. իսկ ո՞ւր էր դեւերի տեղը. երկի՞նքն էր, ուր
լուսաւորութիւն կայ, ուր թագաւորում են պայծառ Դ+-
ոչ. նոցա տեղը ֆ-ն է, դ-ժ-ոխ-ն է, այսինքն խաբեբաների վեր-
ջին փրկութեան տեղը, տաջանքի եւ հեծութեան աշխարհը.
որովհետեւ դ-ժ-ոխ+ բառը ցեղակից է զանդիկ դ-ա-ղ-ան-ի, պարսիկ
դ-ա-ղ-ի բառերին, որոնց բոլորի ընդհանուր արմատն դ-ա-ղ նը-
շանակում է դանջել եւ խ-ռ-էլ. այսպէս ուրեմն հեթանոս Հա-
յերի աչքում եւս խաբեբայութիւնն իբրեւ մի պարսաւելի
գործ հեռու է եղել բարութեան գաղափարից. սակայն այդ
մոլութեան ոգին աւելի շատ պէտք է արմատացած լինէր Հա-
յերին դրացի եւ ցեղակից Պարսիկների մէջ. որովհետեւ վեր-
ջիններս մի առանձին աստուածութիւն ունէին ուխտապա-
հութեան կամ երդման աստուած Միթրա (Միհր) անունով,
որը բիւր աչք եւ հազար ականջ ունենալով ամենատես եւ ա-
մենագէտ է եւ հսկում է մարդոց գործառնութիւններին. նո-

բանից անկարելի էր ծածկել մի բան. նա խաբուել չէր կարող. այդ պատճառով նորա պաշտամանցը նուիրուած աղօթքների եւ երգերի մէջ ամենից շատ գարշելի եւ պիղծ են համարած այն մարդիկ, որոնք երգումը քանդում են, ուխտագրուժ են եւ այդպիսով դեւերի իշխանութեան տակից դուրս գալ չեն կարող. իւր տեղում կրիսոսինք, թէ Հայոց մէջ էլ կա՞ր արդեօք այդպիսի մի աստուածութիւն. այստեղ մեր խօսքը միայն այն էր թէ դ՝ (դաւոդ) խօսքը նախ եւ յառաջ խաբեբայութեան գաղափարի հետ է կապուած եղել, բայց ժամանակով կիրառութեան եղանակը մոքի կողից փոխուել է. մեզ յայտնի է, որ Ս. գրքի մէջ Եւային խաբող օձին ոչ թէ դեւ անուն կը տրուի, այլ ՀԷՐ ԽՈՒԷՕՂ. այս մականունը յարմար է գալիս եւ ղենդական ՊՐՈՒՂ խօսքին, որ նշանակում է գրժօղ, ԽՈՒԷՕՂ (արմ. գրուժ, հայերէն գրժել, գժրել). այսպէս կոչուում էին այն տեսակ դեւերը, որոնք կանայի կերպարանքով մոլորեցնում էին հաւատացեալներին. ինչպէս օձը Եւային. Եւ ի՞նչ էր առհասարակ դեւերի ձեռքն ընկնողների վիճակը — մահ, ապականու-թիւն եւ գժոխք կամ խաւար. այն որ ինքն իրեն մէջ բարոյապէս այնքան թոյլ է, որ խաբողին դէմ կանգնելու չափ ոյժ չունի, նա իւր ամբողջութեան, անարատութեան կամ ապահովութեան մէջ մնալու չէ. նորա գլխի տէրը Արհմնի պաշտօնեաներն են, նորա վաստակը Հարամու (Հարամանի, Խարամանի = Արհմն) համար է. նա պէտք է միայն աւաղակների եւ գողերի, «հինից եւ ասպատակութեանց» ձեռքը գերի լինի, որովհետեւ բարի աստուածները ձեռք են վերցնում նորանից, լոյսը հեռանում է եւ մահը, որ իրօք ապականութիւն է նշանակում (զնդ. արմ. մրէնՂ = ապականել), ամենայն զօրութեամբ տէր է լինում նորան: Այսպէս էր հին Պարսից համոզմունքը. այսպէս պէտք է լինէր եւ հեթանոս Հայերի համոզմունքը. որովհետեւ չարերի տեղը Հայոց առասպելների մէջ միայն մահն ա՝ անլոյս աշխարհն է. մենք գիտենք որ հեթեթների մէջ Եօթը գլխանի դեւերը, ՉԱՊԱ՝ պատանեան Եւային, մութն այրերի մէջ ստորերկրեայ տեղերում են բնակում եւ մեծ մասամբ գիշերներն են գործում. մենք գիտենք, որ մի քանի

տեղ մեր հառարակ ժողովուրդը «Ա՝ պատանեանին գիշերայ» մայր է համարում. եւ առասպելների մէջ այդ գիշերուայ մայրերի շունչն է, որ խաւարեցնում է երկիրը. մենք գիտենք, որ ժողովրդի համոզմունքով «Ա՝ը մի խորհրդաւոր գոյն է եւ չարի ծնունդ է. ձախորդութիւնը «Ա՝ ա՝ մահ» է կոչուում. անյաջող գործ կատարողին «Ա՝ էրէ՝» էն ասում. «Ա՝ը երազի մէջ սատանայ է. «Ա՝ հաւի արիւնը մի փրկարար միջոց է. անբաղդանալը «Ա՝ա՝ ոչՂԷԼ է նշանակում. մեկին անիծելիս ասում են «ԸՆԱ՝ ԽԱ՝ ՈՒՂԷԼ», «Ա՝ կապէ՝», «Ա՝ անյապաքն էրԼՀա՝». եւ այլն: Այս ամենը մեր ժողովրդի հնութեան յիշատակներն են եւ ոչ միայն առասպելական անձերի ու իրողութիւնների մէջ են արտայայտուած, այլ մինչեւ անգամ պատմական անձինքների մէջ. յայտնի է, որ Արտաշէս Բ. ի որդին Արտաւազդ Բ. ը մի շատ նախանձոտ եւ չարագրգիռ մարդ է եղել. ի՞նչ է առասպելած Հայ ժողովուրդն այդ չար մարդու վերայ. նախ այն, որ Արտաւազդին, այսինքն Արտաշէսի հարազատ որդուն վիշապազունք գողացել են եւ տեղը մի դեւ են դրել. սորանով հասկացնում է, թէ այն չար Արտաւազդն իսկական Արտաւազդը չէ, որովհետեւ Արտաշէսի նման բարի մարդուց այնպիսի չար զաւակ ծնել չէր կարող. այլ բարի հօր զաւակն էլ բարի պէտք է լինէր. երկրորդ այն, որ չար Արտաւազդն իւր չափազանց նախանձոտութեան կամ ագահութեան համար չժառանգեց իւր հօր ՎԷՐՋԷՆ ՕՐՀՆՈՒԹԻՆԸ, որ ՍՈՂՆԱՅՆ ԲԱՂԴԱՏՈՒ ԵՒ ԲԱՐԻ ՀԱՅՆ ՎԷՐՋԷՆ ՀԱՅԱՊԱՏՈՒԹԻՆԸ պէտք չունէր. եւ երրորդ որ ոչ միայն հօր օրհնէնքից զրկուաւ, այլեւ մի սարսափելի անէծք առաւ իւր հօրից. անէծք, որ մեծ անբաղդութիւն է մի ժառանգի համար. ինչո՞ւ, որովհետեւ այդ անէծքը պիտի անբաժան հետեւէր որդու բաղդին եւ մինչեւ իսկ մահ բերէր կեանքի ու երջանկութեան փոխարէն. «մինչ դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս անդ կալցեն ըզքեզ քաջք եւ տարցեն յազատն ի վեր ի Մասիս, անդ կացցես, ալաս՝ ՉՆ՝ պեսցես», այսպէս անիծեց Արտաշէս թագաւորն իւր չար որդուն Արտաւազդին. անդառնալի էր բարի թագաւորի հրամանը. անդառնալի՞, որովհետեւ աշխարհի պահապան ԲԱՐԻ ՍՈՊՈՍԾՆԵՐԸ (քաջերը) պիտի չհանդուրժեն

ժէլին տեսնելով, որ (ԿՐԸ) թագաւորում է աշխարհիս երեսին. չէ՞ որ չարութեան գահը յաւիտենական լինել չի կարող . . . . Ուստի չվայելեց եւ Արտաւազդն իւր թագաւորութիւնը, թէ պէտեւ իւր եղբայրների արեան եւ արցունքի մէջ թաթախած արքայական փառաւոր թագը գլխին՝ կլխրոխտաբ աշխարհս լրեն գերի անելու. չվայելեց, որովհետեւ ոչ իւր ահեղ զինուորութիւնը, ոչ իւր արքայական գանձերը, ոչ իւր խրոխտ իշխանական ձայնը չկարողացան պահպանել իւր կեանքը, իւր թանկագին պրՒը. ինչո՞ւ. պատճառ, որ իւր հայրը վերջին օրհնութեան փոխարէն մի անէծք էր կարդացած. եւ յիրաւի Արտաւազդ արքայն մի որսի ժամանակ անյայտանում է Մասիսի խորխորատներից մէկի մէջ. եւ այս երդութիւնը ժողովրդի առասպելութեանց մէջ շատ կենդանի կերպով է պատկերացած. ժողովուրդն անկասկած չար թագաւորին չէր կարող լոյս աշխարհը տանել, ինչպէս Հռովմի ամբոխը հաւատացած էր թէ իրենց անյայտացած բարի թագաւորին Հռոմուլոսին իւր հայր Մարս աստուածը տարած է իւր հետ երկինք. ոչ. Հայ ժողովուրդն Արտաւազդի անհետանալու պատմութիւնից մի փառաւոր պսակ հիւսեց ԲԱՐՈՒԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՊԱՐԾԵԼՈՒ համար. Հայ ժողովուրդն ասաց. ահա վերջապէս աշխարհը ազատուաւ Արտաւազդից, որ Հայաստանի խռովարար եւ չար ոգին էր. ահա դթացին Մասսի քաջերը մեր աշխարհի վերայ եւ բռնեցին այն չար ոգին, տարան Մասսի ՏՈՐՆ ՈՐ ԱՆԼՅՈՒՍ ԽՈՐՔԷՆ եւ այնտեղ շղթայեցին նորան, որ էլ դուրս չգայ եւ պանդէ աշխարհ. եւ ինչո՞վ յաւերժացուց Հայ ժողովուրդն իւր այս անկեղծ բարեսիրութեան զգացմունքն եւ խնդութիւնը. նորա դարբիններն անդադար ծեծում են իրենց սալերը, մինչեւ անգամ քրիստոնէութեան ժամանակ կիրակի օրերն եւս, որպէս զի Արտաւազդի շղթաներն ամրանան եւ չկարողանայ ազատուիլ ու գալ աշխարհը խռովելու . . . .

Ինչ որ վերեւն ասացինք բարու եւ չարի, լոյսի եւ խաւարի գաղափարների վերայ այն ամենը յար եւ անբաժան եղել է Հայոց զարգացման բոլոր շրջանների մէջ. սկսեալ այն օրից, երբ Հայոց լեզուն գոյութիւն է գտել, այն օրից եւ արմատացել են Հայ մարդու մէջ բոլոր այն գաղափարները, որոնց պատկերներն էին մեր յիշած խօսքերն ու դարձուածները. մինչեւ անգամ քրիստոնէութեան շրջանում Հայի միտքը դարձեալ նոյն գաղափարներով է պատկերացնում իւր աստուածութիւնը եւ իւր կրօնի վսեմ առանձնութիւնքը. այս երեւում է նորանից որ Հայ ազգը քրիստոնէութեան առաջին վարդապետին ԼՈՒՍԱՒՈՐԻՆ մականունը տուեց. եւ մինչեւ այսօր էլ Հայ ժողովրդի մէջ մի աւանդութիւն կայ թէ Ս. Գրիգորի ՃՇԳԷՂԸ կանդեղը վառուում է Արագածի գլուխը. այս աւանդութիւնից մեզ դժուար չէ մակաբերել, որ Հայոց ազգի հայեցուածքները կրօնի մէջ գլխաւորապէս կապուած են եղել լոյսի հետ նաեւ այն պատճառով, որ Հայոց լեռներն էլ միշտ լուսաւորուած թէ հրային բղխումներ ունենալու համար եւ թէ մանաւանդ Հայոց բարձր եւ ձիւնապատ գագաթների արեւի դէմ ցոլալու համար. ԼՈՒՍԱՒՈՐԻՆ մականուան մէջ մենք տեսնում ենք Հայ ազգի ամբողջ հայեցուածքը, երբ մտաբերում ենք, որ Հայոց քրիստոնէութեան առաջին ժամանակները աւանդութեանց մէջ պատկերացած է դարձեալ լոյսի եւ խաւարի մրցումը եւ այն՝ լի բազմատեսակ աքանչելիքներով. մի մեհեանից մի մեհեան հալածական են լինում ԼՈՒՍԱՒՈՐԻՆ ձեռքով ԴԼՆԷԸ. ուր որ խաչի նշանը կանգնում է ԼՈՒՍԱՒՈՐԻՆԸ, այնտեղից բարձրանում է ԾՈՒԽ ԵՒ ՄԱՌԱԽՈՒՂ ԵՒ ՓՐՊԱՊՈՒՄ է ԽՈՒՐԸ. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ տեսած տեսիլքը ներկայացնում է միայն մի լոյսի ովկիանոս, ուր զուարթ ու կենդանի գոյներով կամար կամարի վերայ հաստատվելով լոյս են կանգնում Հայոց մայրաքաղաքի ոլորտները. հրեղէն գետեր, լուսեղէն սիւներ եւ մի ՁՈՂԱԿՆ ՍՐԲԱՎԱՅՐ են ամփոփում դարձեալ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ տեսիլքը։ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ժամանակից հեռու չէ եւ Ս. Թարգմանչաց ժամանակը. ինչպէս որ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ գործունէութեան մէջ Հայ ժողովուրդը պատկերացնում էր լոյսի եւ խաւարի տարբերութիւնը, նոյնն էր եւ Ս. Թարգմանիչների օրով. այս երեւում է նորանից, որ եկեղեցական երգերից շատերի մէջ միակ բանաստեղծական կէտը լոյսի եւ խաւարի, կեանքի եւ մահուան, արքայութեան եւ դժոխքի վերայ է հաստատուած.

եւ եթէ ուշադրութեամբ կարդալու լինինք իթիւս այլոց, Ղազարու յարութեան եւ Աւագ շաբաթու շարականները, որ Ս. Սահակ Պարթեւի գրչից են դուրս եկել, մենք կըտեսնինք, որ պատկերների մեծ մասը — լոյս, կեանք, անմահութիւն — եւն խօսքերով է ամփոփած. զորօրինակ. «Ապէ՛ր ը՛սոյ և ճառագայթն անշէջանելի լոյս... մատչեա՛ ի մեզ պնդգ խաւարին խորհրդոյ եւ ը՛սոսչեա՛ զմեզ». Լոյսը ի հայրական ծոցոյ ծագեալ հալածելով զխաւարն մեզմէ.... «Արիւնն զլոյս որպէս զօթոց... բնակեալ ի լոյս անմատոյց... «Լոյսն ի հօրէ ը՛սոյ ծագեալ լուսաւորեալ զարդարեաց զԱդամ... «Ազբիւր կենաց եւ անմահութեան աստուածային ձայնիւ գողցոյսդ զմահ...» «Յաստուածային ձայնէ գոչմանն սարսեցին գողցով կարապետք գժոխոց». «Զայնեցեր Ղազարու եւ գողցոյս մահ, գժոխք պարպեցաս, սպանանութիւն ը՛ծաս». «Անապականութեան ապէ՛ր, անմահութեանց պարգեւատու». եւ այլն։ Ս. Սահակ Պարթեւի այս խօսքերը շինծու բանաստեղծութեան ոչ մի նշան չունին. ոչ որ ուզենայ նոցա մէջ որոնել յետին դարերի արուեստական դարձուածները, նորա ջանքը զուր է եւ անօգուտ. որովհետեւ Ս. Պարթեւի բոլոր շարականները ներշնչում են մարդուս մէջ մի անարուեստ պարզութիւն եւ բնականութիւն թէ լեզուի եւ թէ մտքերի կողմից. նոցա պարզութիւնն ու թեթեւութիւնն աւելի նորանով է բացատրւում, որ պատկերները միանգամայն ժողովրդական են եղած եւ կենդանի. խօսք չկայ, որ Ս. Պարթեւի խօսքերն իւր ժամանակի ժողովրդեան գաղափարների արտայայտութիւնն էր, որը տակաւին չէր կարողացել մոռանալ հեթանոսական գաղափարներն, ինչպէս որ ստուգուած է այդ միքանի այլ պատմական ցուցումներով եւս։ Որչափ որ դժուարին է մի նոր կրօն, նոր սկզբունք թագաւորեցնել մի հին ժողովրդի մէջ, նորանից եւս առաւել դժուար է արմատահան անել մի հին ժողովրդի միջից այն նուիրական տարրերը, որ նորա հոգու հետ անբաժան մակրդուած են. Լուսաւորիչների գործն է այդ տարրերից աղնիւներն ընտրել եւ նոցա վերայ պատուաստել նոր վարդապետութեան մտքերը

կամ հաշտեցնել նոցա իրար հետ*). ահա այդ ճարպիկութիւնն ունեցած են Հայոց քրիստոնէութեան առաջին վարդապետներն այսինքն Ս. Լուսաւորիչ եւ իւր գաղափարները ժառանգող նուիրական շառաւիղները. նոցա բոլորի սկզբնական յաջողութիւնն այն պատճառով մեծ եղաւ եւ անօրինակ, որ նոքա քարոզում եւ դաստում էին ժողովրդին մատչելի մտքերով, նոքա երգում ու փառաբանում էին ժողովրդին ծանօթ զգացմունքներով, նոքա ճանաչած էին Հայ ժողովրդի սրտի այն լարերը, որոնք աստուածութեան գաղափարի հետ հաղորդակից էին ու կարող էին շարժել Հայի լեզուն դէպի ճշմարիտ Աստուծոյ բարեբանութիւնը։

Մենք բոլոր այս մեր ասածները բաւական ապացոյց պիտի համարենք հաստատելու թէ հին Հայերի հեթանոսական կրօնը նոյն աստուածութիւններն էր ընդունում ինչոր հին Պարսից. եւ թէ այդ կրօնով աստուածացած էին լոյսը, կեանքը, բարին եւն հակառակ խաւարի, մահու, չարի եւ ապականութեան։ Մինչեւ անգամ մանրամասնութիւնների մէջն էլ Հայոց հեթանոսութիւնը նման է եղել հին Պարսից հեթանոսութեանը. զորօրինակ հին Պարսից կրօնով Որմիզդը միեւնոյն ժամանակ եւ յաղագս և ամենաստեղծ է, բայց կոչւում է եւ արարիչ այդ օգիների. նոյնն է եւ Հայոց Արամազդը, ինչպէս տեսնելու ենք յետոյ. հին Պարսից մէջ մանր բարի աստուածութիւններ շատ կան եւ նոցա մէջ ոմանք կերակրի համեղութեան, ոմանք օդերի քաղցրութեան, ոմանք անձրեւի առատութեան օգի են ճանաչուած. նոցա հակառակ կան եւ չար օգիներ, որոնք խոչընդոտն են նոցա յաջողութեանը. այս կողմից էլ հին Հայոց հեթանոսութեան մէջ պէտք է լիներ նը-

(*) Եթէ այս աչքով նայելու լինինք Ս. գրքի Թարգմանութեան վերայ, այն ժամանակ մեզ հասկանալի կըլինին այն չնչին տարբերութիւնները, որ կան Թերեւս նորա եւ ուրիշ ընտիր Թարգմանութեանց մէջ. սակայն նշանաւորն այն է, որ ընդհանրապէս շատ ընտիր եւ պարզ ոճ ունի Ս. գրքի Թարգմանութիւնը, որ դարձեալ մեր ասածն է հաստատում. մինչեւ անգամ Ս. Թարգմանիչք աշխատած են մի քանի աստղերի եւ ամիսների անունները հայերէն դնել կամ Թէ եբրայականի մօտ հայերէն մեկնութիւնն էլ աւելացնել։

մանութիւն. որովհետեւ այժմ ժողովրդի մէջ կան միքանի այդպիսի գաղափարներ. զորօրինակ մեր վերը յիշած պահապան հրեշտակը, որ ամեն մարդու յատկացուցած է. կամ թէ որ ասում են հօրօպ — հօրօպ, հացի հրեշտակ, հոգի հրեշտակ եւլն այս ամենը նոյն հեթանոսութեան հետքերը պէտք է լինին. նմանապէս եւ մաղէ կամ-ըմէ գաղափարը, որ վերջին դատաստանն է յիշեցնում, նոյնն է երեւում մեզ, ինչոր հին Պարսից սիրէթը կամ զէնդավէստայի չինո-անդ ասուած դատաստանի կամուրջը։ Այսպէս թէ այնպէս, մենք գիտենք, որ Հայոց հեթանոսութեան զարգացումը չմնաց նոյն ճանապարհի վերայ ինչոր հին Պարսիցը. թերեւս երկրի աշխարհագրական դիրքը կամ նաեւ քաղաքական պայմաններն էին պատճառ այդ տարբերութեան. ուստի եւ առանց հեռանալու իւր նախնական սկզբունքներից՝ Հայոց հեթանոսութիւնը մի առանձին ընթացք դուաւ, ունեցաւ իւր առանձին եկամուտ տարրերը, իւր առանձին քաղաքական ասպարէզն եւ իւր յատուկ պատմութիւնը, որ արձանանում էին մեհենական յիշատակագրերի մէջ։ Արդ տեսնենք թէ ինչպէս է ներկայանում հեթանոս Հայն իւր պաշտած աստուածութիւնների մէջ։

Գլխաւոր եւ մեծ աստուածը կոչւում էր Արամազդ. այս կոչումը նոյնն է ինչոր հին Պարսից եւ հարեւանների Ահուրամազդա *), Որմիզդ, Օրմուզդ անունները. Ահուրամազդա նշանակում է էակ կ'մաստոն — կամ դէր կ'մաստ — ն. այսպէս կոչւում է Ահուրամազդան, որովհետեւ նա է բոլոր բարի ոգիների եւ բարութեանց արարիչը. արարչական զօրութիւնը զանազան տեղ զանազան պատուանուն ունի. այդ կախուած է իւրաքանչիւր ժողովրդի զարգացումից երբ ժողովուրդն իրեն շրջապատող բնութեան ազդեցութեան տակ՝ ամենայն երեւոյթից ահ եւ սարսափ է կրում, նա իւր պաշտած արարչական զօրութիւնը պատկերացնում է իբրեւ զինուորեալ եւ ռազմավար զօրութիւն. այդ զօրութիւնն է, որ շանթեր ու ամպրոպներ է արձակում բնութեան չար եւ վնասակար տարրերը ջնջելու. այդ զօրութիւնն է, որ գոռալով որոտալով դողի մէջ է ձգում անթափանցելի անտառների ահարկու գազանները եւ նոցա հետ միասին կենդանիների թագն ու պսակը—բանական մարդը. ի վերջոյ այդ զօրութիւնն է, որ իջնում բնակում է դիւցազունների մէջ եւ նոցա նետերին ու սլաքներին թռիչ է տալիս թշնամեաց հրոսակները վանելու. այսպիսի մի ահեղ ու որոտալից աստուածութիւն էր Հնդկաց Ինդրան կամ Յունաց Դիոսն ու Հռովմայեցւոց Իսպիտերը. սակայն այդպէս չէր հին Պարսից արարչական զօրութիւնը. նոցա Ահուրամազդան կամ Որմիզդը երկնային թագաւորութեան մէջ նոյն դիրքն ու նշանակութիւնն ունէր, ինչոր երկրիս վերայ մահկանացու թագաւորները Պարսից եւ հարեւան ազգերի մէջ. ազգերն իրենց աստուածութիւնքն, իրենց վերայ իշխող գերագոյն զօրութիւնքը ներկայացնում են այնպէս, ինչպէսոր երեւում է նոցա աչքին երկրային իշխանութեան կամ թագաւորութեան պատկերը. այդ կողմից հին Պարսից եւ նոցա հարեւան ազգերի կրօնը մի հայելի է նոցա քաղաքական կազմակերպութեան. որովհետեւ հին Պարսից եւ հարեւանների քաղաքական կազմակերպութեան մէջ մի սահմանադրական սկզբունք կար. իւրաքանչիւր գաւառ կամ երկիր ունէր իւր մասնաւոր քաղաքական սահմանները, մասնաւոր տեղական օրէնսդրութիւնքը եւ իւր յատուկ թագաւորը. բայց որովհետեւ զինուորութեան կողմից կարող էր մէկը տկար լինել եւ միւսը զօրեղ կամ թէ որքան եւ կատարեալ լինէր դարձեալ հաւասարակշռութիւն չպիտի լինէր բոլոր արքաների մէջ, այդ պատճառով այդ արքաներից զօրեղագոյնի ձեռքն էր անցնում բոլոր միւսների առաջնորդութիւնը. այդ առաջնորդութիւնը շատ անգամ հաստատուում էր պատահական յաջողութիւնների վերայ կամ փոխարկուում

(*) Ա հ ո ւ ր ա - է ա - մ ա զ դ ա, էակ, կրօնական մտքով նշանակում է եւ դէր. այս բառն արմատակից է ասդ-ուծ խօսքին եւ երկուսի ընդհանուր արմատն է սանսկր. աս =լինիլ բայը. այնպէսոր ահուրա եւ աստուած նոյնանշան են եւ դոցա ընդհանուր ստուգաբանութիւնն է հայերէն է (որ էն) բառը, որ յայտնի է, թէ նմանապէս Աստուծոյ անուն է։ Մազդան ա արմատն է, որ իբրեւ էական մնացած է եւ մեր մի քանի գաւառականներում եւ որի մնացորդն է ա = է բայը. զորօրինակ ուտում ա, դնում ա, եւլն։

էր գէպի բռնակալութիւն. բայց մեծ մասով պահպանում էր իւր նուիրական նշանակութիւնն առանց վնասելու երկրի դարաւոր սովորութիւններին եւ սկզբունքներին. այսպէս՝ մենք տեսնում ենք, որ ամբողջ Պարսկաստանի եւ Ասորեստանի վերայ այսինքն Հինդ գետից սկսած մինչեւ Եփրատը՝ քաղաքական գերիշխանութիւնը գտնուում էր ապտպչ ապտպչ ձեռքը, որն իբրեւ մի կեդրոնական զօրութիւն իւր մէջ միաւորում էր միւս մանա-ը ապտանէրի քաղաքական իրաւասութեան մի մասը եւ երբեմն իշխում էր նոցա գահի վերայ՝ կարգելով նոր արքաներ*): Ահա այս քաղաքական սկզբունքների հայելին մենք տեսնում ենք հին Պարսից երեւակայած երկնային թագաւորութեան մէջ. ամենիմաստ էակը, ամենայն բարութեանց աղբիւրը — Ահուրամազդան՝ ոչ Ինդրայի եւ Դիոսի շանթարձակ զօրութիւնն ունէր եւ ոչ էլ մի բուռն իշխանութեան պատկեր էր. նա ինքը մի աստուած էր այլ աստուածների մէջ, որոնք նորան գահակից են, որոնք բոլոր նորա փառաւոր յատկութիւններն ունին. միայն թէ չունին նորա արարչական զօրութիւնն, այլ ընդհակառակն իրենք էլ նորա արարածներն են. այս պատճառով Ահուրամազդան իշխում է տիեզերքի վերայ միմիայն իմաստութեան շնորհիւ. իմաստութեա՞ն, որ միակ անսխալ առաջնորդն է հասարակական գործերի մէջ եւ առանց որի անկարելի է ոչ միայն մի քանի աջակիցների հետ վարուել, այլ եւ ընկերութեանն, աշխարհին բարութեան պատճառ լինել. Ահուրամազդան այդ ամենիմաստ էակը հին Պարսից եւ նոցա հարեւանների աչքում իւր այդ գերագոյն արժանաւորութեան համար եւ աստուածապետ է հանդիսացած՝ այսինքն ապտպ-ա ապտպ-ոց. նորա աթոռակիցներն են ամէշա սպենտա

(*) Թէ Հայոց նախնի քաղաքական կազմութիւնն էլ այսպէս է եղել, այդ երեւում է նորանից, որ իւրաքանչիւր նախարարութիւն միայն մի քանի պայմաններով կապուած էր Հայոց Թագաւորի հետ, իսկ տեղական իրաւասութեանց մէջ, իւրաքանչիւր նախարար ունէր Թագաւորի իրաւունք եւ նշան. այս մասին յուսով ենք մի այլ անգամ դէպք կունենանք աւելի ընդարձակօրէն պարզելու եւ ապացուցանելու մեր գաղափարը:

կոչուած վեց գերագոյն զօրութիւնքը, որոնց արարիչն էլ ինքն Ահուրամազդան է. այդ աթոռակիցների անունը նշանակում է անմահ (ամէշա) սո-ըբ (սպենտա). բացի այն Ահուրամազդային աջակցում են յաղապտ կոչուած ոգիները, որոնցից մէկն ինքն է եւ որոնց արարիչն էլ ինքն է. այդ ոգիների անունը նշանակում է պաշտելի (յազատա*). բացի այս մականուններն Ահուրամազդային ասում էին եւ սպենտո մայնյու-շ, որ նշանակում է սո-ըբ (սպենտա) հոգի (մայնյուշ). այս մականունն աւելի հաստատում է, որ Ահուրամազդայի գլխաւոր մեծութիւնը նորա իմաստութիւնն է. այս ամենից երեւում է, որ հին Պարսից գերագոյն էակի կոչումներն են պէր կամ էակ իմասպոն, սո-ըբ և անմահ և պաշտելի և հոգի սո-ըբ:

Ա.յսպիսի մի յատկութիւն է ունեցել եւ Հայոց Ահուրամազդան՝ Արամազդ աստուածը. հեթանոս Հայերի գաղափարով Արամազդը մի ամենագէտ էակ է. միեւնոյն ժամանակ նա է աստուածների հայրը. այսինքն ոչ միայն աստուած է, այլ եւ ծնող աստուածոց, այլ եւ երկնի եւ երկրի արարիչ. նորան պատուում էին «ապի» մականունով, որ գործունէութեան եւ ժրութեան խորհուրդ ունի. «արի Արամազդն» է, որ շնորհում է երկրին ամենայն բարութիւն, լիութիւն եւ պարարտութիւն»: Երբ լի ու պարարտ է երկիրը, նշան է այն՝ ժողովրդի իմաստութեան եւ ժրաջանութեան. որովհետեւ իմաստութիւնն անշահ է առանց ժրաջանութեան, ուստի եւ Հայոց աստուածների հայրն Արամազդ, որ իմաստութեան պատկեր է, նոյն եւ ժրաջան (արի) է հանդիսացած. հեթանոս Հայի գաղափարով մէկն առանց միւսին նոյն է, թէ հոգին առանց մարմնի. ուստի եւ իւր գերագոյն սրբութիւնների գլուխը դրած է այդ մեծ գաղափարի պատկերն «ապի Արամազդը»: Սկիզբները գուցէ Հայերն էլ հին Պարսիկների նման իմանալի կերպով էին պաշտում Արամազդին, բայց Հայոց քաղաքական կեանքի զարգաց-

(*) Մեզ այնպէս է երեւում թէ, Մասիս լեռան կոչումներից մէկը յազատն սոյն յազատա խօսքից է մնացել. «յազատն ի վեր ի Մասիս» նշանակում է դէպի պաշտելի Մասիսը:

ման հետ զարգացաւ եւ Հայոց աստուածպաշտութեան եղանակը, մանաւանդ յունական քաղաքակրթութեանը ծանօթանալուց յետոյ. այս պատճառով եւ սկսեցին տեսանելի պատկերներ կանգնել իրենց իմանալի աստուածութիւնների տեղն եւ մեհեանների ու բագիններին մէջ պաշտօն կատարել. այսպէս հետզհետէ Արշակունի թագաւորների շնորհիւ, որոնք աւելի հակումն ունէին յունական եւ հռովմէական քաղաքակրթութեանը, արմատացաւ Հայոց մէջ եւ կռապաշտութիւնը, որն առաւել հաստատուն կազմակերպութիւն գտաւ Հայոց աշխարհակալ թագաւորներից մէկի Տիգրան երկրորդի օրով. սա մեծ եռանդով կարգաւորեց Հայաստանի մեհեանները՝ տեղաւորելով նոցա մէջ իւր հօր Արտաշէսի Յունաստանից բերած արձանները. ահա այն արձաններէն մէկն էր Յունաց Դիոսի պատկերը, որ թերեւս իւր վառաւորութեան եւ մեծագնութեան համար արժանացաւ Հայոց Արամազդի տեղը բռնելու։ Այս գերագոյն էակի գլխաւոր աթոռը գտնուում էր Բարձր Հայքի Դարանաղեաց գաւառում Անի ամրոցում (արդի Դամախ կամ Կամախք քաղաքի մօտերը) ուր էր եւ Հայոց Արշակունի թագաւորների հանգստարանը։ Բայց անկասկած ուրիշ տեղեր էլ գտնուում էր նորա պատկերը. եւ որովհետեւ մեր պատմիչները լռում են, ուստի չենք կարող յանուանէ յիշել. միայն Խորենացին Հռիփսիմեանց պատմութեան մէջ յիշում է, որ Արամազդի պատկերը գտնուում էր եւ Վասպուրականի Անձեւացեաց գաւառում Պաղատ լերան վերայ։

Հայոց աստուածների հօր, ապէ և ֆատրոն աստուածապետի մեծութիւնն երեւում է նորա ծնունդներից. եւ ամենից պանծալի ու փառաւոր ծնունդն էր Անահիտ տիկինը. Հայ մարդու գարաւոր սկզբունքներից մէկն է «զգաստութիւնը». այս խօսքը մի է, բայց շատ խորհրդաւոր է եւ բազմաբովանդակ. մարդս իմաստութեան եւ ժրաջանութեան հետ միասին պիտի ունենայ եւ «զգաստութեան» առաքինութիւնը, որ ամենայն բարի մարդու զարդը պիտի լինի. զգաստութեամբ մարդս կըճանաչէ իւր արդար վաստակի գինը. զգաստութեամբ կըճանաչուի նա բարեբարոյ, պարկեշտ, դրացու բարեացը աչք

չդնող եւ մանաւանդ կեանքի սանձերը չկորցնող եւ ինքնիշխան. զգաստութիւնն իմաստութեան այն է. լիրբ, անբարոյական, ինքնահաւան անձինք, որչափ եւ խելացի լինին եւ ժրաջան, դարձեալ արժանի չեն իմաստուն կոչուելու. այս շրջանի մէջ միայն ամենայն կին կարող է արժանաւոր տանտիկին լինել, ամենայն մարդ արժանաւոր քաղաքացի, ամենայն երիտասարդ արժանաւոր ժառանգ հասարակութեան. այս շրջանի մէջ միայն կարող է լինել երէրէ շնո-ՐԻ-ն և պարբարո-ՐԻ-ն և լեռ-ՐԻ-ն. ուր պակասում է զգաստութիւնը, չափաւորութիւնը կամ հաւասարութեան սկզբունքը, այնտեղ թագաւորելու է ապականութիւն եւ անփառութիւն։ Ահա իւր այս հայեցուածներն է մարմնացուցել հեթանոս Հայ ժողովուրդը Անահիտ դիցուհու մէջ. Անահիտ, որ զենդական բառով հին Պարսից մէջն էլ Անահիտա էր կոչուում եւ նշանակում է անբիծ, անարատ, Արամազդի դուստրն էր եւ ճանաչուած էր իբրեւ «մայր ամենայն ղգաստոց-ՐԻԵՆՆ, բարերար ամենայն մարդկան ԲՆՈ-ՐԻԵՆ, արուվ կեայ և պկենդանոց-ՐԻ-ն կրէ երէրէ» Հայոց, որ է փառք աղգին ոեղոյ և կեցոց-ցին»։ Ինչքան նեղ լինէր հեթանոս Հայերի հայեցուածքը զգաստութեան վերայ, այնուամենայնիւ նշանաւոր է այն, որ այդպիսի մի վսեմ բարոյականութեան աղբիւր համարում են աստուածների հօրը. ուրեմն իմաստութեան հետ անբաժան են համարած եւ զգաստութիւնը. որքան եւ կցկտուր բառերով է յայտնում աւանդութիւնն այդ առաքինութեան նշանակութիւնն, այնուամենայնիւ այսքանս պարզ է, որ անարատութեան, ամբծութեան գաղափարն այնքան սիրելի է եղած հեթանոս Հայերին, որ նորա աստուածութիւնն՝ Անահիտ՝ կոչուում է կեանք և կենդանո-ՐԻ-ն աշխարհի և փառք ո- պարծանք Հայոց երէրէն։ Հայոց սէրը դէպի Անահիտ դիցուհին արտայայտուած է եւ նորա պաշտամունքի մէջ. նախ՝ որ թագաւորներն Անահիտից էին խնդրում խնամակալո-ՐԻ-ն երէնց երէրէ վերայ. եւ երկրորդ՝ որ մի քանի նշանաւոր տեղեր գտնուում էին նորա մեհեանները, ուր ամենից շատ էին մթերուում Հայոց գանձերն իբրեւ պատարագ այդ մեծ տիկնոջը. այդպիսի մեհեաններից մէկը, որ Անահիտի ԴԵՖ և ԲՈ-ն

մեհեանն էր, գտնուում էր այժմու Երզնկայ քաղաքի մօտ Երիզայ աւանում։ Անահիտ դիցուհու պաշտամանց երկրորդ տեղն էր Այրարատի Արտաշատ քաղաքում, որն երեւի շատ նշանաւոր չէր։ իսկ երկրորդը, որ կոչուում էր Ամոռ Անահիտայ, գտնուում էր Տուրուբերանի Տարօն գաւառում Քարքէ սարի ստորոտն Արածանի գետի վերայ Աշտիշատ աւանում (այժմու Ս. Կարապետի մօտերը)։ Խորենացին իւր Թղթի մէջ առ Սահակ Արծրունին Բարդուղիմէոս առաքեալի վերայ խօսելիս յիշում է Անձեւացեաց աշխարհի Դարբնաց գիւղ ասուած տեղը, «ուր դեւք բազումք բնակեալ··· պատրէին զմարդիկ տեղւոյն ··· տուեալ գեղս ախտականս առ ի կատարել զպղծութիւնս ախտից, կռանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին։ յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անդ առ քրայլին դեգերէին՝ առեալ չաստուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն ··· Հասեալ Ս. Առաքեալն, հալածեաց զդարբինսն գործօնեայս չարին եւ զկուռսն փշրեաց, որ յառնոռն Անահտայ էր»։ Սորանից երեւում է, որ Անահիտ դիցուհու պատկերը Վասպուրականումն էլ էին պաշտում եւ նորա մեհենի մօտ գտնուել է եւ մի այլ աստուածութիւն՝ բժշկութեան զօրութիւն ունեցող։ եւ այդ բժշկութեան գործը անցել էր դարբինների ձեռքը, որոնք կրակի մատչող զօրութեան շնորհիւ երեւի յաջողում էին մի քանի դաւեր բժշկելու, բայց մեծ մասամբ ի հարկէ, խաբելու ժողովրդին։ Անահտի պատկերներն էլ յիշատակուում են իբրեւ թանգագին արձաններ, որոնց յատկացուցած էր «ակէհայր», «ակէհատ», «ակէձին կամ «ակէ պապակէր մականունները։ այս մականուններից մէկը «ակէհատ մինչեւ մեր օրերն էլ պահպանուած է, եւ եղել է յատուկ անուն ու տրուում է կանանց (Ոսկեհատ անուան կրճատումն է եւ Օսկօ անունը)։ այս հանգամանքն ապացուցանում է, որ Անահիտ տիկինն այնքան ժողովրդականութիւն է ունեցած, որ մինչեւ անգամ քրիստոնէութեան այս ձիգ դարերում անկարելի է եղել անհետացնել նորա յիշատակը։

Անահիտ տիկնոջ քոյրն էր Աստղիկ՝ գեղեցկութեան աստուածուհին։ գեղեցկութեան գաղափարը հին Պարսից մէջ

զարգացած չլինելով, նոքա չունէին դորա համար առանձին աստուածութիւն։ թէպէտեւ կային առանձին ոգիներ, որոնք իբրեւ գեղեցիկ պատկեր երկրորդական նշանակութիւն ունէին։ եւ այդ ունի իւր հիմքը։ Պարսկաստանն իւր աշխարհագրական տեղադրութեամբ չունի այն գեղեցիկ տեսարաններն եւ բնութիւնը, որ գրգռէ ժողովրդի մէջ գեղեցկութեան ճաշակ, թէեւ Պարսից ժողովուրդն իւր կերպարանքով, մանաւանդ իգական սեռը, տգեղների շարքում չէ։ Այլ է Հայաստանը։ այստեղ նախ չկայ այն տաղտկալի միակերպութիւնը բնութեան մէջ, ինչ որ է Պարսկաստանում։ երկրորդ որ բնութեան բազմատեսակութեան մէջ կայ արդարեւ շատ քնքուշութիւն դեռ այս աւերակ դրութեան մէջ, հազարաւոր տարիներ բազմատեսակ բնական եւ արուեստական աւերանքների ենթարկուելուց յետոյ։ Հայաստանի պայծառ երկինքը, բազմահովիտ՝ երբեմն ձիւնափայլ լեռների մէջ ծածանող անթիւ ծովակներն ու լճակները, վտակների եւ առուակների շատութիւնը եւ նոցա պատճառած երկրի պարարտութիւնն ու բազմաբերութիւնը այդ ընդունակ են ծնուցանելու իրենք գեղեցիկ քնքոյշ կերպարանքներ, որոնք անշուշտ Աստղիկ դիցուհու հակապատկերը պիտի լինէին։ Հեթանոս Հայերի ջերմեռանդութիւնն առ Աստղիկ դիցուհին այնքան մեծ էր եւ հայեցուածքներն այնքան վսեմ, որ իւր գաղափարի մէջ գեղեցկութեան լճակից աղամարդի ամենալաւ յատկութիւնն համարած է քաջութիւնը։ Քաջութիւնը, որ Հայաստանի պէս երկրում արդարեւ զարգացած էր այն աստիճանի, որ քաջութեան նախապատկերը Վահագն արքայն աստուածների դասը դասուաւ եւ նորա քաջութեան չափն էլ այնչափ մեծ էր, որ ժողովուրդը չէր կարող հաւատալ, որ այդպիսի մի անձը մարդկային ծնունդ լինի։ ընդհակառակն իւր երգերի մէջ արձանացուցած է նորա գերբնական ծնունդը երկնի եւ երկրի եւ ծիրանի ծովի երկունքից։ Ահա այս աստուածացեալ արքայն Վահագն Տիգրանեան, որ քաջութիւնն Հայոց հողից իբրեւ մի չար դժնիկ, որ ազատեց Հայ ժողովուրդին չար էակների ազդեցութիւնից՝ իւր անհուն քաջութեամբ մաքառելով

վնասակար տարրերի դէմ, ահա այս քաջ Վահագն արքայն է գեղեցիկ դիցուհու լծակիցը, Աստղիկն ամուսինը. զուգաւորութիւնն, որ արդարեւ Հայոց գաղափարներին հակառակ չէ, եւ ներկայացնում է մի խորհրդաւոր առասպելութիւն. այսօր եւս մեր գիւղական լեռնային համազգիների մէջ ճշդիւ կատարուում է այդ խորհուրդը. տղամարդն այն ժամանակ միայն կարող է ամուսնանալ, երբ նա իւր սրտի ընտրածը կարողացած է քաջութեամբ փախցնել օրիորդի հօր տնից. եւ ահա այդ սկզբունքն է, այդ հեթանոսական հնութիւն կրող սովորութիւնն է պատճառ, որ այսօր շատ հայաբնակ գիւղերում դեռ առանց գիտակցութեան կատարում են աղջիկ փախցնելը եւ այդ համարուում է տակաւին մի տեսակ առաքինութիւն, որին շատ ներողամտութեամբ է նայում Հայ ժողովուրդը.... Սոյն իսկ սկզբունքն է պատկերացնում եւ Արտաշէս Բ-ի վերայ հիւսած երգը, որի մէջ պարզ երեւում է թէ ժողովուրդն երգում է Արտաշէսի տղամարդութիւնը, որ գեռն անյաւ եւ փախուց Սաթինիկին այս կողմ.

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
Ընկէց ընդ մէջք օրիորդին Ալանաց
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին
Արագ հասուցանելով ի բանակն իւր։

Մի երգ, որ այսօր էլ կարող են երգել Հայ եւ Քիւրդ կտրիճներն իրենց լեռներում Սաթինիկներ փախցնելու ժամանակ... Աստղիկ դիցուհու պաշտամանց տեղն էր Աշտիշատ աւանը, ուր էր եւ ոսկեմայր Անահիտի ոսկեհատ բագինը. այստեղ Աստղիկ դիցուհին Տարօնի չքնաղ աշխարհի մէջ բնակելով ուներ եւ մի առանձին մեհեան, որ կոչուում էր «Էնէակ Վահագնի», իսկ Վահագնի մեհեանը կոչուում էր Վահէվահեան, «լի ոսկւով եւ արծաթով եւ բազում նուէր մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ». սորանից երեւում է որ այստեղ այս յաշտից տեղում կեդրոնացած էր նաեւ Վահագնի պաշտամունքը. զարմանալի

միաւորութիւն. ուր ամբիոն-ընեան դիցո-հոս որբայրն է եղած, անդ հաստատած է Հայ ժողովուրդն եւ գեղեցիկ-ընեան դիցո-հոս տաճարը եւ նոցա վերայ, կարծես պահապան է կարգած փաջ-ընեան «գին». անշուշտ թէ Աստղիկ եւ թէ Վահագն, երբ կատարում էին իրենց գիշերային հսկողութիւնն աշխարհի վերայ (յայտնի է որ Աստղիկ եւ Վահագն երկնային լուսաւորների կարգն են դասուած) այստեղ այս յաշտից տեղում էին գտնում իրենց հանգստութիւնը, ուր նոցա փառաւորում էր անթիւ զոհերով ու ոծներով երախտագէտ Հայ ժողովուրդը. . . . Այստեղ հարկ է յիշել, որ ժողովրդի երեւակայութեան մէջ Վահագնի քաջութիւնները միայն երկրիս վերայ չէին ճանաչուած, այլեւ երկնքում. որովհետեւ այս Վահագն էր, որ գնաց երկինք եւ Բարշամի յարդը գողացաւ իւր «Էնէակը բերեց. եւ իւր այդ քաջութեան անջնջելի հետքերը թողեց երկնային կամարի վերայ՝ յօրինելով յարդագողի կամ դարմանագողի ճանապարհը, որ ուրիշ խօսքով կոնդաձիք էլ կասուի*)։ Այս յարդագող փալի երկրաւոր պատկերը, որ պաշտուում էր Վահեվահեան մեհեանում, կոչուում էր Վահագն Վիշապափաղ։

Արամազդի երրորդ դուստրն է Նանէ դիցուհին, որի պատկերը գտնուում էր Բարձր Հայքի Դարանաղեաց գաւառում Թիլն աւանում ոչ հեռի այժմու Երզնկայ քաղաքից. որովհետեւ նոյն աւանում տեղաւորեց Տիգրան Բ. Ցունաց Սաթենասի պատկերը, որ իմաստութեան աստուածուհի էր, այդ պատճառով կարելի է կարծել, որ Նանէ դիցուհին էլ իմաստութեան կամ աւելի ճիշդ ասած հնարագիտութեան մասնաւոր աստուածուհի լիներ. հնարագիտութեան ենք ասում, որովհետեւ այդ հանճարն յատուկ է միայն կանանց սեռին եւ մասնաւորապէս Հայ կանանց, որոնք մի տեսակ հանճարեղ տանտիկնութիւն անելու վարժ են եւ սակաւ կարողութեամբ մեծամեծ բաներ են

(*) Միայն Վահագնը չէ, որ համաստեղութեանց մէջ մի պատուաւոր տեղ է բռնած իւր անհուն քաջութեան պատճառով, այլ նորանից զատ մի եւնոյն յաջողակութեան համար նշանաւոր համաստեղութեանց մէկի մէջ դասուած է եւ Հայոց նախնեաց համար նշանաւոր համաստեղութեանց մէկի մէջ դասուած է եւ Հայոց նախնիայն Հայկ։ Այս առթիւ, եթէ յաջողի մեզ, մի այլ անգամ աւելի ընդարձակ կը խօսինք։

գլուխ բերում իրենց ընտանեկան շրջանի մէջ, չնայելով այն նեղ ու կաշկանդեալ պայմաններին, որոնց մէջ գտնուած է Հայ կինը դարաւոր ժամանակներում։ Մեզ այնպէս է երեւում, որ Նանէ դիցուհին Հայ կնոջ նշանակութիւնը պիտի ներկայացնէր մեր հեթանոս նախնեաց աչքին եւ մանաւանդ պիտի համարուէր ճշմարիտ արտայայտութիւն այն հայացքների, որ ունեցած է Հայ ժողովուրդը կնոջ նշանակութեան վերայ։ Կինն այսօրուայ Հայի աչքումն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ գերդաստան սիւնը, այր մարդու ամենահաւատարիմ ընկերակիցը եւ գլխաւորապէս նորա տունը, նորա զաւակները հոգացող եւ պահպանողը։ Հայ տղամարդը կարծես թէ իւր տան կառավարութեան մէջ մի օտար ոմն է. ամենայն տնտեսութիւն, ամենայն խնայողութիւն, ամենայն հիւրասիրութիւն պահպանուել է եւ պիտի պահպանուի տան մէջ միմիայն տանտիկնոջ շնորհիւ։ Հայ կնոջ աւելի բարձր նշանակութիւնը մեզ յայտնի է եւ հնագարեան պատմութիւնից. մենք գիտենք, որ Տիգրան Ա.ի քոյրն Տիգրանուհի մինչեւ անգամ իւր հնարագիտութեամբ փրկած է իւր եղբօր քաղաքական պատիւը։ Սանոտ դայեկի հնարագիտութիւններին է պարտական Սանատրուկ արքայն իւր կեանքը. կամ նորա որդուն Արտաշէս մանկանն ազատօղն էլ մի Սանոտի նման կին է եղած. մեզ յայտնի է նմանապէս Եղիշէի նկարագրութիւնից Ե. դարի կանանց գիւցազնական անձնուիրութիւնը. կանա՞նց, որ իրենց հեռաւոր ամուսինների կեանքն ազատելու համար «մատամբք իւրեանց վաստակեցին եւ կերակրեցան եւ զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ ամ յամէ թ ոչակ առնէին եւ տային տանել նոցա ի մխիթարութիւն» կանա՞նց, որ այն տաժանելի վշտակրութեանց մէջ գարձեալ չէին թոյլ թողած իրենց զաւակների կրթութիւնը եւ ջերմեռանդութեամբ հոգս էին քաշում նոցա դաստիարակութեան վերայ։ Այս է եղել Հայ կինը միշտ. եւ այդ պատճառով էլ Հայոց գերդաստունն է մնացել միակ աւանդապահ մեր ներքին կեանքի, ուր երեւում է Հայոց նախնական պարզութիւնը. Հայ կինն էր, որ չէն ու պատկառելի է պահել Հայ մարդու դառն քրտինքով կանգնած տուն-

նը. չէն ու պատկառելի ոչ միայն հարուստ, այլ աղքատ դասերի մէջն անգամ։ Արդ՝ Հայ կնոջ այս հնարագիտութեան*) պատկերն եղած է Նանէ դիցուհին, արի եւ իմաստուն Արամազդի հարազատ ծնունդը։ Այս ապացուցում է մասամբ եւ նորանով, որ այժմու մեր մի քանի գաւառներում մօր կամ տանտիկնոջ կոչումն է Նանէ կամ Նանի, Նան. այս բառը թէ որ ուզենանք մեկնել Հայոց կամ ցեղակից լեզուների միջնորդութեամբ, մենք գտնելու չենք ոչ մի կապակցութիւն ցեղակից լեզուների բառերի հետ. աչքի առաջ ունենալով, որ մայրը միեւնոյն ժամանակ եւ սնուցիչ կամ սանտու է, թերեւս հիմք լինի կարծելու, որ Հայոց Նանէ եւ Պարսից Նան (հաց) բառերն արմատակից են եւ երկուսն էլ մոքով նշանակում են սննդատու. ինչպէսոր հացը մարդուս առօրեայ սնունդն է, նմանապէս էլ մայրն է իւր զաւակների առօրեայ սնունդը։ Եթէ այս այսպէս լինի, դարձեալ Նանէ դիցուհին կըմնայ մայրութեան եւ տանտիկնութեան գաղափարի պատկեր, որ ընաւ օտար չէ ոչ Հայի աշխարհատեսութեանը, ոչ նորա դարաւոր աւանդութիւններին եւ ոչ Հայր Արամազդի նման իմաստուն էակի ծնօղական կոչմանը**)։

Հայր Արամազդի գերդաստան չորրորդ անդամն է նորա որդին Միհր աստուածը, որ «զգաստութեան, գեղեցկութեան եւ հնարագիտութեան» դիցուհիների հարազատ եղբայրն էր, ապա ուրեմն իւր հօր եւ քոյրերի նման բարի եւ պատկառելի նշաններ պիտի ունենար։ Նորա մեհեանը գտնուում էր Բարձր Հայքի Դերջան գաւառում Բագայառիճն աւանում. այստեղ կանգնեց Տիգրան Բ. Ցունաց Հեփեստոս կամ Վուլկան աստուածի արձանը։ Ինչպէս վերեւն յիշեցինք, հին Պարսից մէջ այդ

(*) Պէտք չէ շփոթել հնարագիտութիւնը կախարդութեան հետ, որ նոյնպէս կանանց սեռին յատուկ է եղած. եւ առասպելների մէջ՝ մանաւանդ չար վնասակար հնարագիտութիւնը ջադու պառաւներից է ծագում. թէեւ այս կախարդական յատկութիւնն էլ նոյնն է ապացուցանում ինչոր մենք ասացինք։

(**) Ուսումնականների մէջ երկու կարծիք կայ Նանէ դիցուհու ծագման վերայ. մէկը կարծում է, իբրեւ թէ այս կոչումը սանսկրիտական նանա (մայր) բառի հետ կապ ունի. (տես P. de Lagarde, Armenische Studien). թէեւ այս մեր կարծիքին

աստուածութիւնը կոչուում էր Մէհրա եւ համարուում էր Ա-
հուրամազդային էակից եւ աթոռակից. նորա մանաւոր գործն
էր հոգել «խոսրովական» վերայ և պարծել «խոսրովական».
նա էր այդ պատճառով եւ լոյսի ու օդի աստուածութիւնը.
ինչպէս որ մի ծածկեալ եւ անծանօթ իր կամ գործ բացուում
ու յայտնի է լինում լոյսի եւ օդի օգնութեամբ, այնպէս էլ
մարդկանց խարդախութիւնը, կեղծաւորութիւնը լոյս ձգող
ու բաց անող Միթրա աստուածն էր. նա ինքն անտեսանելի
կերպով իշխող էր աշխարհիս վերայ, բայց նորա տեսանելի
պատկերն էր արեգակն երկնքում եւ կրակն երկրիս վերայ,
որոնք եւ այդ պատճառով պաշտելի էին մարդկանց մէջ, ի
թիւս այլոց, իբրեւ լոյս անող, յայտնագործող զօրութիւն:
Հայոց մէջ էլ անկասկած Միհրը (Միթրայ) նոյն նշանակու-
թիւնն է ունեցած. որովհետեւ արեգակն եւ կրակ պաշտելն
եղած է Հայոց մէջ. միեւնոյն ժամանակ նորա անունով կո-

ընդդէմ չէ, բայց որովհետեւ նանա բառը սանսկրիտ լեզուի մէջ ուշ կազմուած բառերից է, վասնորոյ դժուար է ենթադրել, որ այդ բառը նոյնութեամբ գտնուած լինէր ցեղակից լեզուների մէջ, մանաւանդ իբրեւ աստուածուհի փոխարկուած լինէր Հայոց մէջ. այնուամենայնիւ սանսկրիտական նանա (մայր) բառն էլ նոյնն է ինչոր մեր դաւառականներում նանէ խօսքը: Երկրորդ կարծիքն այն է, որ Նանէ դիցուհու անունը նոյնն են համարում ինչոր Բաբիլոնի աստուածուհին Իշտար, որն իբրեւ թէ նոյն Աստղիկն է եւ Ասորեստանում կոչուում է Նանա (տես Всеобщ. Исторія Асохика, пер Эмина): Այս կարծիքից պէտք էր հետեւցնել, որ Նանէ դիցուհին ազգային տեղական աստուածուհի չէր, այլ մի եկամուտ ոմն, այնպէս ինչպէս էին Գիսանէս եւ Դեմետր կամ այլ օտար աստուածները, որոնց պաշտում էին Հայաստանում: Սակայն այս սխալ է, որովհետեւ Նանէ դիցուհին աւանդութեամբ կոչուում է դուստր Արամազդայ, որ ցոյց է տալիս նորա բնիկ աստուածուհի լինիլը, մինչդեռ աւանդութիւնը ոչ մի այսպիսի ակնարկ չէ անում յատկապէս օտար աստուածութիւնների վերայ: Բացի այս, Նանա կամ Նանէա կոչումը Եբրայականի մէջ ասուում է Մրնի եւ նշանակում է բաղդի եւ մանաւանդ չար բաղդի ոգի. մինչդեռ Բ. Մակաբ. Ա. գլ. 13, 15 տողերում չէ յիշուած Նանէա կոչումը, այլ ասուած է «եւ անդէն անկան կործանեցան շուրջ զՆանեայ տաճարաւն. ի խորհուրդ յիմարութեան խորհեցան նոքա զՆէեմայ տաճարաւն»: Այս խօսքերը ոչ մի կապ չունին Նանէ աստուածութեան հետ եւ դոցա մեկնութիւնը կարելի է տեսնել կարդալով Բ. Մակաբ. նոյն գլուխը 17—36 տուն:

չուում էր Հայոց ամիսներից մէկը Միհրական կամ Մեհեկան
ամիսը, որ նշան է նորա ընդարձակ ժողովրդականութեանը.
Միհրի անունն եղած է եւ մարդկանց համար յատուկ անուն,
ինչպէս օրինակ Միհրան, Մեհրուժան, Միհրշապուհ, Միհրդատ,
Մեհենդակ եւլն: Միեւնոյն երեւոյթները տեսնում ենք եւ
Պարսից մէջ, որից պիտի մակաբերենք թէ Հայոց Միհր աս-
տուածը նոյն ընդարձակ նշանակութիւնն է ունեցած, ինչոր
հին Պարսից մէջ է ունեցել. նորա ժողովրդականութեանը
նայելով պէտք է կարծել, որ այդ աստուածութիւնը պատ-
կերացնում է մասնաւորապէս Հայոց «խոսրովական».
մի յատկութիւն, որ Հայոց մէջ միշտ առաջնակարգ ա-
ռաքինութիւնների շարքումն է եղել: Թէպէտեւ մեր լեզուի մէջ
չենք գտնում այդ միտքը ապացուցանող մի բառ կամ դար-
ձուած, բայց Պարսից լեզուի մէջ կան մի երկու դէպքեր, որ
Միհրի այդ յատկութիւնն են բացատրում. արդի Պարսից լե-
զուով Միհր նշանակում է սէր, իսկ Միհրբան — բարեկամ, սի-
րելի. այս հանգամանքը մեզ տեղիք է տալիս կարծելու, որ
գործածութիւնից դուրս եկած հեթանոսական Միհր խօսքի
տեղը մտել եւ ընդհանրացել է սէր խօսքը. եւ այն՝ որ սիրով
է վարուում իւր ընկերի հետ, այն՝ որ բարեկամութեան կապը
սուրբ է պահում, այն՝ որ հաւատարիմ է, այն եւ կոչուում
է «խոսրովական»*):

Հայր Արամազդի գերդաստանն ամբողջացնելու համար հարկ
է խօսել թէ ինչ էր նորա կնոջ անունը եւ ինչ գաղափարի
պատկեր էր նա: Այս հարցին մինչեւ հիմայ, եթէ չենք սխա-
լուում, տակաւին ոչ ոք մօտեցած չէ, այդ պատճառով մենք
կաշխատինք, որքան կարելի է, մանրամասն բացատրել մեր
միտքը: Մեզ այնպէս է երեւում, որ Հայոց աստուածների թա-
գուհին կոչուում էր Սպանդարամետ եւ նորա մէջ պատկե-
րացած է եղել երկրիս ծննդականութեան գաղափարն անտե-

(*) Միհրի աւելի ընդարձակ ժողովրդականութիւնն երեւում է եւ այն տօնից, որ կատարուում է փետրվարի 13ին (Մեհեկան ամիս) Տէրընտաղ անունով. Հայոց հեթանոսական տօների վերայ խօսելիս կաշխատինք աւելի պարզել մեր միտքը:

սանելի կերպով, իսկ նորա տեսանելի պատկերն եղած է ոսկն իսկ երկիրս, գետինը, որ, ինչպէս յայտնի է, իբրեւ մայր ծնանում եւ բուսուցանում է ամենայն ինչ։ Հեթանոս Հայերի գաղափարով իմաստութեան պատկերն Արամազդ՝ երկնքի գերագոյն էակը՝ մի անսահման գոյութիւն գոլով՝ չէր կարող օգտակար լինել հասարակութեանը չունենալով մի ներգործութեան առարկայ. ինչպէս, որ մի հատիկ սերմն, որ ինքն ըստ ինքեան թէեւ աղնիւ բան է, բայց անօգուտ է, իսկ եթէ պատշաճաւոր հողի մէջ ձգուի կրբեղմնաւորի եւ կրպիտոյանայ, այնպէս էլ իմաստութիւնն իւր ամենակարող զօրութեամբ, ի թիւս այլոց, կարող է մարմնանալ մարդկանց աչքի առաջ երկրիս պտղաբերութեան եւ մշակութեան մէջ։ Ուստի Հայր Արամազդի նման իմաստութեան գերագոյն էակի լծակիցն է արժանապէս երկրիս ծննդականութիւնը, Սպանդարամետը Այս հաստատուում է միքանի ցուցմունքներով։

Նախ որ՝ Սպանդարամետ կոչումն իւր հնութեամբ եւ իւր սկզբնական նշանակութեամբ համապատասխանում է մեր ասածին. Զենդավէստայի մէջ Ահուրամազդայի վեց աթոռակիցներից, այսինքն Ամէշասպանտաներից մէկը, որի մէջ յատկապէս մարմնացած էր գերագոյն խոհականութիւնը, կոչուում էր Արմայիտի. այդ Ամէշասպէնտան իգական սեռից էր եւ համարուում էր, Զենդավէստայի խօսքերին նայելով, մերթ ամուսին եւ մերթ դուստր Ահուրամազդայի. այդ դիցուհու անուանից անբաժան էր միշտ սպէնդա ածականը, որ, ինչպէս վերեւը տեսանք, նշանակում է սուրբ *), բայց կարող է նշանակել եւ աճեցուցիչ. այնպէս որ Սպէնտա Արմայիտի նշանակում է խոհականութիւն կամ իմաստութիւն անարատ, սուրբ, եւ իմաստութիւն աճեցուցիչ, ծննդական. աւելի այս վերջին նշանակութեան պատճառով է թերեւս, որ Զենդավէստայի մէջ Սպէնտա Արմայիտի աստուածուհու մասնաւոր հովանաւորութեան տակն է յիշուում եւ այս երկիրս, գետինը. ուստի հին Պարսիկները խնամակալ աստուածուհու անունով խնամեալն Լա, այսինքն այս երկրին սուրբ էին Սպէնդա Արմայիտի. ուրեմն դեռ Զենդավէստայի նման հնագոյն յիշատակարանների մէջ այդ կոչումն երկու աստուածութեան է տրուած — ա) Սպէնտա Արմայիտի՝ խոհականութեան աստուածուհի եւ բ.) Սպէնտա Արմայիտի՝ երկիր, ցամաք։ Գալով հայերէն կոչմանը մենք տեսնում ենք, Սպանդարամետ բառը յիշեալ երկու զենդական կոչումներից է կազմուած. այսինքն Սպանդ Արամետ, որ նոյն է թէ Սպէնտա Արմայիտի. մեզ բնաւ զարմացնում չէ այն, որ Սպէնտա Արմայիտին եղել է Սպանդ Արամետ. ոչ ապաքէն դարերի հոսանքը եւ ազգերի փոխադարձ զարգացումը ընդունակ են աննշմարելի կերպով յեղյեղելու ժողովրդի բերանում ամենայն մի անուն այն աստիճանի, որ բնաւ ճանաչել անգամ անկարելի լինի. ոչ ապաքէն կայ տարբերութիւն Ահուրա-Մազդա եւ Արամազդ, Միթրա եւ Միհր ձայների մէջ, բայց ոչ ոք կասկածել չի կարող թէ այդ անունները նոյն են, այնպէս ինչպէս նոյն է ամենայն մի յատուկ անուն զանազան ազգերի մէջ, զորօրինակ Յովհաննէս, Իւան եւ Ժան, Յակոբ, Եակոֆ եւ Ժակ, Յովսէփ, Իոսիֆ եւ Ժոզէֆ, Պետրոս եւ Պիէր, Միհրդատ եւ Միտրիդատէս եւայլն։ Այսպէս ուրեմն այն աստուածութիւնը, որ Զենդավէստայի մէջ իբրեւ կին կամ դուստր Ահուրամազդայի կոչուում էր Սպէնտա Արմայիտի, հայերէն կոչուում է Սպանդարամետ եւ կապուած էր Արամազդի հետ նոյն կապերով։ Բացի այդ նոյն աստուածուհու խնամքի տակ գտնուող երկիրս էլ, ինչպէս Զենդավէստայի մէջ կոչուում է Սպէնտա Արմայիտի, հայերէն էլ կոչուում է Սպանդարամետ կամ աւելի սովոր Սանդարամետ. այս վերջին կոչումն աւելի շատ գործ է դրբուում եւ քրիստոնէութեան ժամանակ դժոխքի այսինքն երկրիս խորքերը հասկացնելու համար. այս դէպքում, ինչպէս

(*) Սպենտա ածականի արմատն է սպան = աճեցնել, բուսցնել. սորանից եւ սպան ածականն իրօք նշանակում է աճեցուցիչ, աճումն տուող. սորան համեմատ է Լատինական augustus = աւգոստոս բառը, որ նոյնպէս գործածվում է սուրբ բառի տեղը, բայց իրօք նշանակում է աճեցող։ Հին Պարսից գաղափարով սուրբ այն մարդն է, որ ձգտում է աճումն տալու, աճեցնելու բարի արարչի Ահուրամազդայի փառքը, ուրեմն նուազեցնելու իւր եռանդուն դիմադրութեամբ չար Ահրիմանի փառքը չեզոքացնելով բոլոր նորա չար խորհուրդները, (տես Justi, Handbuch der Zendsprache)։

միքանի ուրիշ խօսքերի մէջ էլ պատահած է, պ գիրը կորչում է եւ երկու խօսքը միացած փոխանակ Սպանդ Արամեան ասում է Սանդարամետ։

Երկրորդ որ՝ Հայոց հին աւանդութիւններն էլ հաստատում են, որ Սպանդարամետ աստուածութիւն եղած է, եւ նոյն կրկին նշանակութիւնն եւս ունեցած է. զորօրինակ Եղեկիէլի մարգարէութեան մէջ Գլ. Լ.Ա. 16 կարդումենք «իձայնէ կործանման նորա դղրդեցան ազգք, յորժամ իջուցի զնա ի դժոխս ընդ իջեալսն ի գուբ. եւ մխիթարէին զնա ի Սանդարամետն ամենայն ծառք փափկութեան եւ այլն..» նմանապէս Ագաթանգեղոսի մէջ եր. 272 կարդում ենք «եւ եկն էջ եհաս մինչեւ մօտ ի յատակս երկրիս ի շինամէջ քաղաքիս եւ բախեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյս եւ մեծ եւ անչափ թնդիւնք հնչեցին ի Սանդարամետոյ անդնդոց։» Այս օրինակների մէջ պարզ երեւում է, որ ինչպէս Զենդավէստայի մէջ երկիրս կոչուում էր Սպենտա Արմայիտի, այնպէս էլ մեր ս. թարգմանիչք երկրին, դժոխքին Սպանդարամետ կամ Սանդարամետ անուն են տալիս, ի հարկ է, աւանդութեանն հետեւելով. բայց կայ յիշատակութիւն եւ Սպանդարամետի աստուածային անձն լինելու վերայ, թէեւ շփոթ գաղափարներով, զոր օրինակ Ս. գրքի թարգմանիչներն Բ. Մակաբ. Զ. Գլ. 7 տան մէջ այսպէս են ասում. «վարէին ածէին ստէպ ստէպ յամսաւոր յօր տօնի ծննդեան թագաւորին, զի զոհեսցեն։ Իբրեւ տօն հասանէր Սպանդարամետական պաշտամանն, տագնապէին զնոսա՝ պրսակեալս թաւ ոստօք Սպանդարամետին կաքաւել.» այստեղ, ինչպէս դժուար չէ նշմարել, Սպանդարամետը, ոչ թէ դժոխքն է կամ երկիրս, այլ մի աստուածային անձն. եւ որքան որ ս. Գրքի բնագրին հմուտ ուսումնականները նկատած են *), այդտեղ ս. թարգմանիչք Սպանդարամետը Յունաց Բաքոսի տեղն են դրած, որից երեւում է, որ դա մի արական աստուածութիւն է եղել. նոյնը հաստատուում է եւ Խորենացու խօսքերով գիրք Գ. Գլ. 62, ուր Սանդարամետապետ ասելով դարձեալ հասկացնում է մի անձնաւորութիւն, բայց տարբեր նշանակութեամբ։ Որովհետեւ Սպանդարամետը միեւնոյն ժամանակ երկիրն է ներկայացնում, ուստի այդ տեղիք է տուել կարծելու *), որ երկրագործութեան աստուածուհի է եղած. այսինքն այն՝ ինչոր Հռովմայեցւոց Ցերէս դիցուհին էր։ Այսպէս ուրեմն մի Սպանդարամետ անունով աստուածութեան գոյութիւնն Հայոց մէջ՝ հաստատուում է Հայոց աւանդութիւններով. եւ որովհետեւ ս. թարգմանիչք դեռ Ե. դդ դարում Գ. յտ. երկու նշանակութիւն են դրել Սպանդարամետ անուան մէջ, ապա ուրեմն այդ երկու նշանակութիւնն էլ ժողովրդական են եղած եւ նորահաս ժողովրդի համար խորդ ու անծանօթ գաղափարներ չէին. ուստի չենք օխալուիր, եթէ ասելու լինինք, որ մինչեւ անգամ երկու նշանակութեան ներքին տարբերութիւնը ցոյց տալու համար գիտութեամբ զանազանութիւն են ձգել նաեւ արտաքին հընչման մէջ. Սպանդարամետ՝ աստուածութիւնն էր յայտնում, իսկ Սանդարամետ՝ երկիրը. որովհետեւ այդ երկու կոչումն էլ միեւնոյն էակինն էր, այդ պատճառով առաջինը, որ մի վերացական գաղափար է, աւելի շուտ է մոռացուել եւ մընացել է ժողովրդի գաղափարի մէջ միայն երկրորդը։

Եւ երրորդ Սպանդարամետի սրբութիւնն իբրեւ աստուածուհի պատկերացած է Հայոց առասպելութիւնների մէջ, ուր գաղափարն երկրի սրբութեան հետ է միացած. այս կէտն է, որ պարզում է Զենդավէստայի յայտնած երկմտութիւնը. այնտեղ Սպանտ Արմեթը կամ կինն է Ահուրամազդայի կամ դուստրը. այստեղ Հայոց առասպելութեանց մէջ յայտնի երեւում է, որ երկիրն — Սպանդարամետը երկնքի — Արամազդի կինն է. այս երեւում է Հայոց Վահագնի երգից, ուր ժողովուրդը կամենալով յայտնել այդ անհուն քաջի գերբնական ծնունդը՝ առասպելած է թէ այդպիսի մի ոգին, Հայոց քաջութեան նախագաղափարը, չէր կարող մարդկեղէն ծնունդ ունենալ, այլ միայն աստուածային. եւ ոչ են նորա

(*) տես P. de Lagarde, Armenische studien.

(*) տես Բառգիրք, Արբայի։

ծնողք. հայրն է երկինքը, որ պատկերացած է լուսաւոր Արամազդի մէջ. մայրն է երկիրս, որ պատկերացած է աճեցուցիչ Սպանդարամետի մէջ, իսկ որբանն է զուարթ Հայաստանի ամենապայծառ տեղը Ծիրանի Ծովը. . . Ահա այն երգի խօսքերը.

Երկնէր երկին եւ երկիր
Երկնէր եւ Ծիրանի Ծով.
Երկն ի Ծովուն ունէր զկարմրիկ եղէգնիկն,
Ընդ եղեգան փող Ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն խարտեաշ պատանեկիկ վաղէր
Նա հուր հեր ունէր
Ապա թէ բոց ունէր մօրուս.
Եւ աչկունքն էին արեգակունք. .

Այս երգը, որ ի թիւս այլոց ապացուցանում է թէ հեթանոս Հայերն աստուածացնում էին երկինքն ու երկիրը, ոչ այլ ինչ է հաստատում, եթէ ոչ այն, որ երկիրս, այսինքն Սպանդարամետ դիցուհին երկնքի այսինքն արի Արամազդի ամուսինն է եղել։

Այս ամենից հետեւում է, որ Սպանդ Արամետ աստուածուհին մեծ մասամբ համապատասխան է Զենդավէստայի Սպենդա Արմայիտի աստուածուհուն. Հայոց մէջ այդ աստուածուհին պաշտելի էր իւր աճեցուցիչ զօրութեան, իւր ծննդականութեան համար. երկրագործութեան յառաջադէմ աշխարհներից մէկը մեր Մայր Հայաստանն անկասկած այդպիսի մի աստուածութեան գաղափար պիտի ունենար իւր սրբութեանց շարքում, քանի որ նոյն իսկ երկիրն ամենայն երկրագործ ազգերի մէջ միշտ աստուածացած է եղել. Հայերն եւ ցեղակից ազգերը համեմատաբար միեւնոյն տնտեսական պայմանների մէջ գտնուելով, ոչ միայն այդպիսի մի յատկացեալ աստուածութիւն են ունեցած երկրի այսինքն գետնի նուիրականութեան վերայ, այլ մինչեւ անգամ բուսականութեան եւ այլ նորան նպաստող տարրերի համար եւս ջոկ ջոկ սրբութիւններ կամ ոգիներ են ունեցած։ Այսպէս օրի-

նակ լեռների պահապան բարի ոգիները կոչուում էին Հաջ. այս ցոյց է տալիս Հայոց խաշնարածութեան զարգացումը. ջրերի պահապան եւ խնամակալ ոգիները կոչուում են Հօրօտ կամ Հօրուտ, որ մինչեւ այժմ էլ յիշուում է ժողովրդի մէջ. տնկերի պահպան եւ խնամակալ ոգիները կոչուում են Մօրօտ կամ Մօրուտ. այնպէս որ այսօրուայ Հօրօտ Մօրօտ ասուած դարձուածը, որ ծաղիկների անուն էլ է, ոչ թէ ռամկական բառախաղ է, այլ դարաւոր հնութիւններից մնացած, ոչ միայն Հայոց մէջ, այլեւ Պարսից եւ այլ ցեղակից ազգերի. եւ յառաջ է եկել Զենդական Հաուրուատ եւ Ամերէտատ Ամեշասպանտաների կոչումից, որոնք նոյնպէս ջրերի եւ տնկերի պահապան ոգիներն են եղած. շատ անգամ Զենդավէստայի մէջ «Հաուրվատա Ամերէտատա» նշանակում է նաեւ «փայտ եւ ջուր» *)։ Նոյն կոչման աղճատեալ ձեւն է Պարսից Ամուրդատ եւ Մուրդատ անուններն, որ ռամկօրէն եղել է եւ հարուտի մարուտի, այսինքն ինչպէս հայերէն ասում ենք հօրօտ մօրօտ. այս Հօրօտ Մօրօտի սրբութեան պատկերն է, որ դեռ շատ հին ժամանակներն Հայոց աստուածպաշտութեան տեղն եղած է Արմաւիրի սօսինների դիցանուէր անտառը։

Այս ամենից զատ եղել է եւ պտուղների խնամակալ աստուած Ամենաբեղ անունով. այս Ամենաբեղն էր, որ միթարում էր հեթանոս այգեպանին իւր քրտանց պտուղն առատութեամբ տեսնելու. որովհետեւ Հայաստանի նման լեռնամած աշխարհում շատ ծայրայեղութիւնք կան բնութեան երեւոյթների մէջ. յանկարծակի ցրտեր, տեղատարափ անձրեւներ, քարակոշկոճ կարկուտներ եւայլն այնքան շատ են պատահում, որ յաճախ նոյն իսկ հասունացած պտուղներն էլ չարաչար վնասում են. այդ պատճառով եւ Ամենաբեղ աստուածը շատ սիրելի ու պաշտելի էր եղած Հայաստանում։ Նորա պաշտամունքն երկրորդական աստուածների մէջ ամենից փառաւորն էր եւ կատարուում էր Բագրեւան-

(*) տես Justi, Hand, d. zend.

դի Բագաւան կամ Դիցաւան կոչուած աւանում. այստեղ տարին մի անգամ այն օրերն, երբ Հայոց պտուղները հասունանալու վերայ էին, հաւաքուում էր հեթանոս Հայ ժողովուրդը եւ աշխարհախումբ մի տօն էր կատարում Նաւասարդի մէկից մինչեւ վեցը. եւ որովհետեւ Ամենաբեղ աստծու տօնը տարեգլխին էր կատարուում, ուստի նորա անուններից մէկն էր եւ Ամանոր, որ նշանակում է տարին նորոգող. այս մի հանդէս էր, որի յիշատակը մինչեւ մեր օրերը մնացած է. այնտեղ ժողովուած բազմութիւնն անշուշտ պատարագ էր բերում իւր պտուղներից անդրանիկները եւ շատ առանձին հանդէսներ էր կատարում ձիարշաւ անելով, եղջերու վազցնելով կամ աղաւնի թռցնելով, ի պատիւ այն աստուածութեանը, որ պահապան է պտուղների եւ նոցանով սնունդ է տալիս մարդկանց եւ կենդանիներին։ Այս հանդէսների յիշատակը մնացած էր մինչեւ Գրիգոր Մագիստրոսի օրերը, որ նա Արտաշէս Բ. ի խօսքերն յիշում է թէ «Ո՞ տայր ինձ զծուխն ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի, զվաղել եղանց եւ զվագել եղջերուաց, մեք վոդ հարուաք եւ թմբկի հարկանէաք։» Բագաւանը մի այնպիսի աշխարհախումբ ուխտատեղի է եղած հեթանոս Հայերի համար, որ Տիգրան Գ. թագաւորն այնտեղ մի առանձին հիւրատուն եւս շինեց ու իւր եղբօր Մաժան քրմապետի գերեզմանի վերայ մի մեհեան կանգնելով հրամայեց, որ բոլոր օտարական անցորդները կարողանան պատսպարան գտնել այն հիւրատան մէջ եւ կերակրուին այն մեհեանի զոհերից եւ պատարագներից, այս հանգամանքը պատճառ եղաւ, որ հեթանոս Հայերն Ամենաբեղ Ամանոր աստծուն ճանաչեցին իբրեւ հիւրընկալ աստուած եւ կոչեցին նորան Վանապոտ. այս վերջին մականունն էլ միանգամայն Հայոց սովորութիւնների եւ աշխարհատեսութեան ճշմարիտ հայելին է. յայտնի է, որ բոլոր հին եւ նոր ազգերը Հայոց ազգի հիւրասիրութիւնը նորա ամենագովելի յատկութիւններից մէկն են համարում, որն եւ մինչեւ ցայսօր յատուկ է Հային. մինչեւ իսկ դիւցազնական դարերից մնացած է մի նշանաւոր աւանդութիւն Հայոց հիւրասիրութեան վերայ,

որի արտայայտութիւնն է Երուանդ Սակաւակեացի թագաւորութեան օրով Հայաստան գաղթող Վարդգէս մանկան հնադարեան երգը. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն զԲասաղ գետով, եկեալ նստեալ զՇրէշ բլրով զԱրտիմէտ քաղաքաւ զԲասաղ գետով կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի։» Նոյն հիւրասիրութեան արտայայտութիւնն է, որ Հայոց երկիրը լցուում էր անդադար խառնիճաղանճ գաղթականներով եւ նորեկ ազգերով։ Ահա Հայի այս հիւրասիրութեան գաղափարն է, որ ներկայացնում է Ամենաբեղ աստուածը. եւ նորան կրվայելէր այդ առաքինութիւնը. որովհետեւ հիւրասիրութիւնը կրթագաւորէ մի ժողովրդի մէջ, երբ նա ոչ թէ կարօտութեան մէջ լինի, այլ նորա տունը լի եւ առատ լինի եւ ունենայ խոհեմ տնտեսութիւն. ահա այդ երկու լաւ յատկութիւններն Հայոց գերդաստան մէջ անպակաս են. Ամենաբեղն ամենայն առատութեամբ պարգեւում է Հային առատ սնունդ նորա ընտանի կենդանիներին կերակուր, առատ մրգեղէններ, ընդեղէններ, արմտիք այլեւ տնական պաշարեղէններ. եւ Նանէ դիցուհին տանտիկնոջ հոգու մէջ բնակելով տնտեսութեան, հնարագիտութեան հանճարով կառավարում է Հայի տունը։

Սպանդարամետ դիցուհու աջակիցներն էին անշուշտ Հօրօտն ու Մօրօտ, Մասսայ քաջերն ու Ամենաբեղ եւ գուցէ այլ ուրիշ աստուածութիւններ, որոնք տակաւին մեզ անծանօթ են. նոքա էին երկրիս ծննդականութեան, օգտակարութեան մասնաւոր յառաջացուցիչները եւ նոցա ցեղակից էին անշուշտ այն ոգիները, որ Զենդավէստային նայելով կերակրին հմեղութիւն, օդերին քաղցրութիւն, անձրեւներին առատութիւն էին տալիս։ Հայոց պատուածութիւնների պակումն ամբողջացնելու համար մեզ մնում է յիշել եւ Տիր պատծու անունը. սա էր Արամազդի դպիրը, աւանդութիւնն անուանում է նորան նաեւ դպիր գիտութեան քրմաց, ուսումն ճարտարութեանց, երաղացոյց եւ երաղընդհան։ Սորանից երեւում է, որ Տիրն էր պատուածների եւ քրմերի մէջ միջնորդ եւ հրեշտակ. նա էր յայտնում երազների գաղտնիքը, նա էր ուսուցանում գիտութիւններն եւ նա

էր աստուածների համար դպրութիւն այսինքն գրագրութիւն անօղը։ Այս յատկութիւններից մէկը մինչեւ հիմայ մի խորհրդաւոր կերպով մնացել է Հայոց պառաւների բերանում, երբ ասում են «գրողը քեզ տանի» որ անշուշտ Տիրն է. նմանապէս մնացել է երազ մեկնելու կախարդութիւնը, եղունգին նայելով գուշակութիւն անելն եւայլն, որ նոյնպէս հին հեթանոսութեան հետքերն են։ Տիր աստծու պաշտամունքի տեղն էր Երեւանու եւ Արտաշատի մէջ տեղն Երազմոյն ասուած աւանում; իսկ նորա պատկերը կոչուում էր Տրիդիք *)։

Այս խոշոր աստուածութիւնների համառօտ եւ հարեւանցի տեսութեամբ վերջացնում ենք այս անգամ մեր խօսքը Հայոց հեթանոսութեան վերայ. եթէ յաջողի մեզ իւր ժամանակին կաշխատինք պարզելու նախ մանր աստուածութիւնների եւ ոգիների գաղափարն, եւ երկրորդ չար աստուածութիւնների եւ ոգիների վերայ եւս, որքան կարելի է, մի ամփոփ տեղեկութիւն տալու։ Բայց եւ այնպէս, այն՝ ինչոր ասացինք մինչ ցարդ Հայոց հեթանոսութեան վերայ, թէպէտեւ շատ թերի է, սակայն ներկայացնում է մեզ հին Հայ ժողովրդի գաղափարների հայելին։ Հային ճանաչել են շատ ազգեր իբրեւ ուսման սէր ու գիտութեան ծարաւ ունեցող ազգ. ճանաչել են նորան իբրեւ մաքրասէր բարքի տէր ազգ, խոյս տուող չար եղեռնագործութիւններից, խոյս տուող աղտեղութիւնից. ճանաչել են նորան իբրեւ մի հնարագէտ ու տնարար ազգ, սիրող շինութիւն ու հաստատութիւն, սիրող յառաջադիմութիւն. ճանաչել են նորան իբրեւ հաւատարիմ եւ տիրասէր ազգ, ձգտող պահպանելու իւր տուած ուխտը, յարգող երդման նշանակութիւնը. ճանաչել են հիւրասէր եւ իւր հայն ու ձեռքը ուրիշին չինայող. բայի այն պակաս չեն եղել Հայոց միջից քաջութեան ու յաղթութեան ոգին, որի կենդանի պատկերը տեսնում ենք Հայոց պատմութեան մէջ, մանաւանդ նորա անընկճելի մաքառման մէջ Մի-

(*) Եթէ այս անունը Տիր բառից է, այլ ոչ Տուր, հաւանական է, որ Տիրացու բառն էլ այդ հին անունից մնացած լինի, որովհետեւ Հայոց մէջ այդ պատուանունը մի ժամանակ շատ ընդարձակ նշանակութիւն ունէր. Տիրաչու եւ գիտնական մի ժամանակ դրեթէ նոյնանշան էին։

ջագետքի աշխարհակալների հետ. *) Նմանապէս յայտնի է, որ Հայոց ընդհանուր պարապմունքն է երկրիս մշակութիւնը, որ Հայն իւր հողի վերայ եւ օտար երկրներում երբէք բահն ու խոփը ձեռքից թողած չէ.... Հայի այս գեղեցիկ յատկութիւնները, որ անկասկած դարաւոր փորձառութեան եւ քաղաքական դիւրափոփոխ հանգամանքներից առաւել եւ առաւել մշակուում էին, նոյնչափ հին են, որչափ հին են նոյն իսկ Արամազդի, Սպանդ Արամետի, Անահիտի, Վահագնի, Նանէի եւայլ սոցա նման նուիրական սրբութիւնների անունները....

(*) Տես Արարատ, 1878 ամի, ԺԲ.

ՄԻԵԻՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾՆ Ի

«Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց»

յերիս գիրս. Վիէննա, 1877.

Ա. Գիրք. Պատմութիւն ժամանակաց մարզպանութեան ի Հայս մասն Ա.

Բ. Գիրք. Նոյնը՝ աշխարհաբառ.

Գ. Գիրք. Յառաջաբան, ծանօթութիւնք, ժամանակագրութիւն և պատմական հատուածներ.

ԵՐԵՔ ԳՐՔԻ ԳԻՆՆ Ի ՄԻԱՍԻՆ 3 ՌՈՒԲԼԻ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0242576